

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Անկախութեան Պայքարը Կը Շարունակուի

Հայաստանի անկախութեան տարեդարձը կը դիմաւորենք յուզումնալից պահու մը, երբ Ազերի թշնամին, իր հետ ունենալով Թուրքիոյ քաղաքական ու ռազմական նեցուկը, հերթական փորձը կը կատարէ ճեղքելու Հայաստանի ինքնիշխան սահմաններու պաշտպանական դիրքերը ու պարտադրելու հայրենի իշխանութիւններուն՝ ընդունելու իր պայմանները:

Այս օրերուն հայութիւնը՝ Հայաստանի ու Արցախի մէջ կը մղէ իր Հայրենիքի գոյութեան, անկախութեան ու տարածքային ամբողջականութեան պայքարը՝ գրեթէ միայնակ մնացած: Ներկայիս տիրող աշխարհաքաղաքական իրավիճակը աւելի շատ նպաստաւոր է Ատրպէյճանական կողմին համար: Ռուսաստանը, որ տակաւին կը նկատուի Հայաստանի ռազմավարական դաշնակիցը, միտնում է Ուքրաինոյ ճահիճին մէջ, ուր իրավիճակը օրէկօր կը վատթարանայ Մոսկուա համար: Հաւաքական Անվտանգութեան Կազմակերպութիւնը, որուն անդամ է Հայաստանը, պատրաստ չէ օգնութեան ձեռք մեկնելու իր դաշնակից երկրին ու կը նախընտրէ չէզոքութիւն պահել Պաքուի եւ Երեւանի միջեւ: Եւրոպական երկիրները մտահոգ են գալիք ծննդային եղանակին իրենց կազմի մատակարարմամբ եւ յոյս ունին, որ Ատրպէյճանական կազմ կրնայ դառնալ լրացուցիչ աղբիւր մը իրավիճակը մեղմելու համար: Այս պատճառաւ ալ անոնք եւս կը փորձեն նոյն հեռաւորութիւնը պահել նախապարձակին եւ յարձակման ենթարկուողին միջեւ: Իրան, որուն ղեկավարները յաճախ կը խօսին Հայաստանի հետ իրենց սահմաններու փոփոխութեան անթոյլատրելիութեան մասին, իրենք եւս ունին իրենց ներքին մտահոգութիւնները, նկատի առնելով որ, բնակչութեան բաւական մեծ տոկոսը ունին Ատրպէյճանական արմատներ, իսկ երեւանի վիճակի չէ գինուորական գետնի վրայ մերձեցում եւ կամ սերտ գործակցութիւն ունենալ Իրանի հետ, Միացեալ Նահանգներու հետ յարաբերութիւնները չվտանգելու համար:

Բացառութիւն կազմեց Ֆրանսան, որուն նախագահը՝ Էմանուէլ Մաքրոն եղաւ միակը, որ խօսեցաւ հասցեագրուած՝ կոչ ընելով Ատրպէյճանին յարգելու Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը: Աւելի ուշ միացաւ նաեւ ԱՄՆ պետական քարտուղար Էնթոնի Բլինքեն:


Շար.ը էջ 6

Ատրպէյճանական Յարձակումը Կը Խլէ Տասնեակ Ձոհեր «Մենք Պէտք Է Բոլոր Հնարաւոր Միջոցներով Պաշտպանենք Հայաստանի Տարածքային Ամբողջականութիւնը, Ինքնիշխանութիւնը, Անկախութիւնը»

Նիկոլ Փաշինեան

Սեպտեմբերի 13-ին, ժամը 00:05-ի սահմաններուն, Ատրպէյճանի զինուած ուժերու ստորաբաժանումները, հրետանային միջոցներու, ականանետերու եւ ԱԹՄ-ներու կիրառմամբ բուռն կրակ բացած են հայ-ատրպէյճանական սահմանի միեւնոյն ժամանակ քանի մը հատուածի մէջ տեղակայուած հայկական դիրքերու ուղղութեամբ: Մասնաւորապէս՝ հրետակոծման ենթարկուած են Սոթքի, Վարդենիսի, Գորիսի, Կապանի, Արտանիշի եւ Իշխանասարի ուղղութեամբ տեղակայուած դիրքերը: Հարուածներ հասցուած են նաեւ քաղաքացիական ենթակառուցուածքներուն:

«Կէսգիշերին Ատրպէյճանի Ձինուած Ուժերը յարձակողական գործողութիւններ է ձեռնարկել ՀՀ 4 ուղղութիւններով, եւ Ատրպէյճանը փորձում է դա ներկայացնել որպէս ի պատասխան իբր հայկական կողմի սադրանքների: Սակայն այդ տեղեկատուութիւնը բացարձակ կեղծ է եւ չի համապատասխանում իրականութեանը», Ազգային Ժողովի հերթական նիստին յայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ ներկայացնելով իրավիճակը հայ-ատրպէյճանական սահմանին:



Հայկական բանակի զինուորը սահմանային դիրքերէն մէկուն վրայ

Փաշինեան յայտարարեց որ, Հայկական կողմը ունի 49 գոհ: «2020թ. 44-օրեայ պատերազմից յետոյ Ատրպէյճանը մի քանի անգամ յայտարարել է, որ եթէ տեսնի, որ ՀՀ զինուած ուժերը եւ բանակը որոշակի կարողականութիւն է հաւաքում, որը, իր ձեռնկերպմամբ, կարող է վտանգ սպառնալ Ատրպէյճանին, իրենք նախապարձակ գործողութիւններ են ձեռնարկելու», յայտարարեց վարչա-

պետ Նիկոլ Փաշինեան եւ յաւելեց, որ Հայաստանը զինուած ուժերու բարեփոխումներ կը ձեռնարկէ ոչ թէ տարածքներ գրաւելու, նուաճելու, այլ ՀՀ ինքնիշխանութիւնը, տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելու եւ պահպանելու համար:

Հայաստանը այսօր ունի բոլոր ֆինանսական հնարաւորութիւնները՝ ձեռք բերելու իրեն

Շար.ը էջ 6

Ռուսաստանի, Ֆրանսայի Եւ Միացեալ Նահանգներու Արձագանքը

Հայաստանի ինքնիշխան տարածքի վրայ Ատրպէյճանական նախապարձակման կապակցութեամբ, աշխարհի տարբեր երկիրներ ու միջազգային կառույցներ հանդէս եկան ռազմական գործողութիւնները դադարեցնելու կոչներով:

Ռուսաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան Յայտարարութիւնը

Ռուսիոյ Դաշնութեան Արտաքին Գործերու Նախարարութեան յայտարարութիւն տարածած է. «Մենք ծայրայեղ մտահոգութիւն կը յայտնեն այս տարուայ Սեպտեմբեր 13-ի գիշերը հայ-ատրպէյճանական սահմանի առանձին հատուածներու մէջ իրավիճակի կտրուկ սրման պատճառով: Կոչ կ'ընենք կողմերուն զերծ մնալու իրավիճակի հետագայ սրումէն, զսպուածութիւն ցուցաբերելու եւ խստօրէն պահպանելու զինադադարը՝ համաձայն Ռուսիոյ, Ատրպէյճանի եւ Հայաստանի ղեկավարներու 2020 թուականի Նոյեմբեր 9-ի, Յունուար 11-ի եւ 2021 թուականի Նոյեմբեր 26-ի եռակողմ յայտարարութիւններուն: Մենք սերտ կապի մէջ ենք Պաքուի եւ Երեւանի հետ: Հայաստանի ղեկավարութեանն ստացուած պայմանաւորութիւնը կ'իրականացուի միջոցով իրավիճակի կարողականութիւնը եւ հաւաքում, որը, իր ձեռնկերպմամբ, կարող է վտանգ սպառնալ Ատրպէյճանին, իրենք նախապարձակ գործողութիւններ են ձեռնարկելու», յայտարարեց վարչա-

տանի ղեկավարութեանն ստացուած է դիմում՝ առկայ երկկողմ պայմանագրերուն համապատասխան եւ ՀԱՊԿ-ի միջոցով իրավիճակի կարգաւորման աջակցելու խնդրանքով: Մենք կ'ակնկալենք, որ Ռուսիոյ միջնորդութեան շնորհիւ այս տարուայ Սեպտեմբեր 13-ին Մոսկուայի ժամանակով 9:00-էն զինադադարի մասին ձեռք բերուած պայմանաւորութիւնը կ'իրականացուի ամբողջութեամբ: Ինչպէս նախապէս, այնպէս ալ մենք կ'ելլենք այն նախադրեալէն, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բոլոր վիճերը պէտք է լուծուին բացառապէս քաղաքական եւ դիւանագիտական ճանապարհով, իսկ սահմանային հարցերու պարագային՝ սահմանազատման երկկողմ լուծումներով: Կոչ կ'ընենք իրաւունքները աշխատանքի ծիրին մէջ Ռուսիոյ խորհրդատուական աջակցութեամբ:

Մաքրոն Ատրպէյճանին Կոչ Ըրած Է Յարգելու Հայաստանի Տարածքային Ամբողջականութիւնը

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն կոչ ըրած է խստօրէն պահպանելու զինադադարը եւ յարգելու Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը:

էլիզէի պալատի հաղորդագրութեան մէջ կը նշուի, որ Ֆրանսայի նախագահը պատրաստ է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ քննարկումներուն եւ հակամարտութեան առնչուող ուսանկէ բխող բոլոր հարցերը բացառապէս բանակցութիւններու միջոցով լուծելուն:

Ֆրանսան նաեւ հրաւիրած է ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի նիստ՝ քննարկելու հայ-ատրպէյճանական սահմանային սրացումը:

ԱՄՆ Անհանգստացած Է

ԱՄՆ արտաքին գործերու նախարար Էնթոնի Պլինքըն հանդէս եկած է յայտարարութեամբ, նշելով, որ Միացեալ Նահանգները խորապէս անհանգստացած է Հայաստան-Ատրպէյճան սահմանի երկայնքով յարձակումներուն, այդ շարքին՝ Հայաստանի մէջ բնակավայրերու եւ քաղաքացիական ենթակառուցուածքներու վրայ հարուածներու մասին հաղորդումներով:

«Հակամարտութիւնը ռազմական լուծում չի կրնար ունենալ: Մենք կոչ կ'ընենք անյապաղ դադարեցնելու որեւէ ռազմական գործողութիւն», յայտարարած է Պլինքըն:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

Իմպիչմենթի Գործընթաց Մտնուածու Շնորհիմունքը Յոյսը Դրել է Իշխանի Վրայ, Սակայն Ոչ Թէ Սաղաթելեան, Այլ՝ Զարբարեան

ՅԵՂԻՆԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Փողոցային պայքարի միջոցով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանին պաշտօնանկ անելու սեւեռուն բաղձանքը կեանքի կոչելի չկարողացած ԱԺ ընդդիմութիւնը, ինչպէս յայտնի է, որոշել է այժմ էլ փորձել սահմանադրական եղանակով՝ խորհրդարանի միջոցով հասնել իր բաղձանքի իրականացմանը: (Ահա թէ ինչու չէր շտապում վաչր դնել մանդատները): Ակներեւ է, սակայն, որ չնայած «գրանդիոզ պլանին»՝ ընդդիմութիւնը վստահ չէ սեփական ուժերի վրայ՝ մտքին դրածը գլուխ բերելու առումով: Անվստահութիւնը միայն սեփական ուժերի հանդէպ չէ, այլ նաեւ հանրային պատշաճ աջակցութեան՝ վստահութեան մասով: Սակայն սա չի խանգարում սերժաքոչարեանական ընդդիմութեանը կասկածի տակ դնել այլոց՝ գործող վարչապետի հանրային վստահութիւնն ու, փաստօրէն, վերջինիս անվստահութիւն յայտնելու գործընթաց սկսել:

Գործընթաց, որը մէկ նախադասութեամբ կարելի է այսպէս ձեւակերպել՝ անինքնավստահների անվստահութիւնը ժողովրդի վստահուած անձին:

Այն, որ ընդդիմութիւնն անվստահօրէն է մտնում այս գործընթացի մէջ, լրացուցիչ ապացուցման կարիք չունի, բաւարար են վերջինիս կարկառուն ներկայացուցիչների յայտարարութիւններն ու անկեղծութեան պոռթկումները:

Նախ՝ «Հայաստան»-ն ու ՊՈՒ-ն չունեն անվստահութեան գործընթաց սկսելու համար նախատեսուած անհրաժեշտ ձայների քանակ՝ պակասում է մէկը: Այս մասին «Երկիր Մետրա»-ի եթերում խօսել է «Հայաստան» դաշինքի անդամ Արմէն Ռուստամեանը: Ինչպէս յայտնի է՝ երբեմնի ընդդիմադիր պատգամաւորներից երկրորդ իշխանը՝ Զարբարեան, ամիսներ առաջ լքեց «Պատիւ Ունեմ»-ն ու այժմ գործում է որպէս անկախ պատգամաւոր: Այնպէս որ, խորհրդարանի մակարդակով իշխանափոխութիւն սկսելուց առաջ հայրենի օպոզիցիան նախ պէտք է փորձի «իշխանադարձութիւն» անել՝ համոզել

Իշխան Զարբարեանին «դարձ ի շրջանս իւր» լինել եւ միանալ իմպիչմենթի գործընթացին: ՀՅԴ-ական պատգամաւոր Արմէն Ռուստամեանը՝ «խօսել էք Զարբարեանի հետ այս թեմայով» հարցին ի պատասխան՝ հեռակայ կարգով սպառնաց գործընկերոջը՝ «եթէ չմիանայ, ինքն իր համար պրոբլեմներ կը ստեղծի»: Ռուստամեանը յաւելեց նաեւ, որ առայժմ Զարբարեանի հետ բանակցութիւններ չեն եղել իրենց նախաձեռնութեանը միանալ-չմիանալու հարցով, սակայն «կարծում եմ՝ նրան այդ հարցը պէտք է տալ, եւ դա կը տրուի մօտ ժամանակներս՝ եթէ սկսուի իմպիչմենթի գործընթաց, կը միանա՞յ, թէ՞ ոչ, առանց անուն նշելու, ի դէպ, որովհետեւ կարծում եմ՝ պէտք է նուազագոյնի հասցնել հրաժարուելու ինչ-որ երեւութական հնարաւորութիւնները, եւ էդ առումով, կարծում եմ, պէտք է նախեւառաջ համոզուած լինենք, որ իմպիչմենթի պրոցես սկսելու համար կանոնակարգով երաշխաւորուած 1/3-ը որ ունի ընդդիմութիւնը՝ դա փաստացի նոյնպէս կայ»: Ստացում է, որ անվստահութեան գործընթացի մասին դեռ ամիսներ առաջ յայտարարած, օրերս էլ այդ ծրագիրը վերահաստատած ընդդիմութիւնը մինչեւ այս պահը չի կարողացել լուծել մէկ ձայնի պակասորդի հարցը, եւ միակ յոյսը, փաստօրէն, իշխան Զարբարեանին «զատուիտ» անելով իրենց նախաձեռնութեանը միանալ տալն է (որպէսզի ԱԺ-ում վարչապետի հրաժարականի գործընթացը մտնի շրջանառութեան մէջ, անհրաժեշտ է 36, ապա՝ 54 պատգամաւորի ստորագրութիւն):

Միջանկեալ յիշեցնենք, որ երբ 2018-ին Նիկոլ Փաշինեանին վարչապետ ընտրելիս ՀՅԴ խմբակցութեան քարտուղար Աղուան Վարդանեանը որոշեց չքուէարկել՝ այդպիսով ընդդիմանալով Փաշինեանին վարչապետ ընտրելու խմբակցութեան որոշմանը, ՀՅԴ ԳՄ-ն օպերատիւ կերպով կառափնարան հրաւիրեց սեփական կուսակցին եւ, «քննելով ընկեր Աղուան Վարդանեանի կարգապահական հարցը, որոշեց նրան հեռացնել ՀՅԴ շարքերից»: Քանի որ իշխան Զարբարեանը ՀՅԴ-ական չէ,

նրա հարցերը լուծելու դաշնակցական մեթոտները, ենթադրում ենք, չեն աշխատելու, միակ աշխատող միջոցը, հաւանաբար, երբեմնի վերահսկիչ պալատի երկարամեայ նախագահին վերաբերող կոմպրոմատների թղթապանակը մեյտան հանելն է լինելու: Իսկ որ այդպիսի թղթապանակներ Սերժ Սարգսեանի արխիւում կը գտնուեն՝ գրեթէ չենք կասկածում: Մինչ այդ յիշեցնենք Արմէն Ռուստամեանին եւ նրա խորհրդարանական գործընկերներին, որ նոյն իրենց կողմից վկայակոչուող Սահմանադրութեամբ՝ «պատգամաւորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդուած չէ հրամայական մանդատով, առաջնորդում է իր խղճով եւ համոզմունքներով»:

Այս նոյն ընդդիմութիւնը, նկատենք, որ անգամ անվստահութեան գործընթաց սկսելու հարցում է անինքնավստահ, յոյս ունի, թէ բացի իշխան Զարբարեանից՝ «դարձի կը բերի» նաեւ անհրաժեշտ թուով ՔՊ-ական պատգամաւորների եւ նրանց կը համոզի կողմ քուէարկել վարչապետին անվստահութիւն յայտնելու իրենց աւանտուրային, այն վարչապետին, որին մէկ տարի առաջ միաձայն կողմ է քուէարկել:

Ինչպէս յայտնի ասացուածքն է յուշում՝ «աբլորը, որը ծուղրուղու կանչել չի կարողանում, մտքին դրել է ձու ածել»:

Իմպիչմենթի գործընթացի նկատմամբ անվստահութեան ծաւալն այս քանով չի սահմանափակուած: Կանխաւ գիտակցելով, որ «պաւլալն» անխուսափելի է լինելու, ընդդիմութիւնը որոշել է դրանում մասնակից դարձնել նաեւ իրեն մանդատ տուած քաղաքացիներին ու համակիրներին՝ գործընթացի դրական ելքը մեծապէս պայմանաւորելով մի քանի օր շարունակ հրապարակում լինելով ու այսպիսով իշխանութեան նկատմամբ ճնշում բանեցնելով, ասել է թէ՛ փողոցի ու խորհրդարանի գործընթացը մի քսելով, ինչպէս 2018-ի յեղափոխութեան օրերին էր: Իշխանութիւնն էլ՝ ի դէմս վարչապետի, ըստ ընդդիմութեան հաշուարկի, ենթարկուելով փոքրամասնութեան կամքին ու հուժկու պարտադրանքին, վերցնելու է

ու սուսուփուս հրաժարական է տալու: Կարելի է կանխատեսել, որ եթէ անգամ խորհրդարանի մակարդակով հնարաւոր լինի բարձրացնել անվստահութեան հարցը, ապա այն չի զուգորդուելու հանրային պատշաճ աջակցութեամբ՝ փողոցում հաւաքուած մարդկանց թուաքանակի առումով: («Դիմադրութիւն» շարժման հասարակական վստահութեան դինամիկան է յուշում): Այդ դէպքում, տապալելով իմպիչմենթի ամբիցիոզ ծրագիրը, կարելի է մեղքը գցել սեփական ընտրողների ու աջակիցների վրայ, որոնք, փաստօրէն, շատ էին ուզում ազատուել Փաշինեանից, սակայն ալարեցին, չեկան հրապարակ, չաջակցեցին իրենց ընտրեալներին՝ նրանց կանգնեցնելով կոտրած տաշտակի առաջ... (Իսկ ինչ է մնում նման իրավիճակում անել ընդդիմութեանը, քան խորհրդարան վերադառնալն ու իրենց տրուած մանդատին յղում անելով՝ եւս կէս տարի իշխանութեան հասցէին «սեփական օրակարգի» շրջանակներում լուսանքներ տեղալը):

Նկատենք, որ ընտրեալները «այս մի գարկը» «փուստ տալուց» յետոյ 6 ամիս շարունակ զրկուած են լինելու իմպիչմենթի գործընթաց սկսելու սահմանադրական հնարաւորութիւնից:

Ընդդիմութիւնը, ինչպէս տեսնում ենք, աննախանձելի իրավիճակում է յայտնուել, Աշտտեանի բառով ասած՝ տառապում է քաղաքական իմպոտենցիայով:

«Civic.am»

Ատրպէյճանի Ապատեղեկատուական Գրոհի Մտիւնները

ՅԱԿՈՔ ԲԱՂԱԵԱՆ

Հայաստանի եւ Արցախի պաշտպանութեան նախարարութիւնները հերքել են ատրպէյճանական կողմի տարածած հերթական լուրը, թէ իբր Արցախի հիւսիսում եւ հայ-ատրպէյճանական սահմանի հիւսիս-արեւելեան հատուածում կրակել են ատրպէյճանական դիրքերի ուղղութեամբ: Արցախի պաշտպանական բանակն ու Հայաստանի ՊՆ յայտնել են, որ դա ապատեղեկատուութիւն է: Ատրպէյճանն այդօրինակ ապատեղեկատուութիւն տարածում է շաբաթներ շարունակ, որոշակի պարբերականութեամբ, ինչը Հայաստանում դիտարկուած է իբրեւ հնարաւոր սահմանային լարուածութեան հրահրման այսպէս ասած նախնական լեզուի մասնակցի փորձ, երբ Պաքուն իր սաղրանքը «կը պատճառաբա-

նի» հայկական կողմին պատասխանելու հանգամանքով: Սակայն, Ատրպէյճանի ապատեղեկատուական արշաւը թերեւս ունի այլ նպատակ, քան այսպէս կոչուած լեզուի մասնակցումը: Ատրպէյճանը առանձնապէս չունի դրա կարիքը:

Պաքուն սահմանային սրացումների զնացել է նաեւ առանց այդօրինակ ապատեղեկատուական արշաւի: Առաւել եւս այսօր միջազգային իրադրութիւնն այնպիսին է, որ լարուածութիւնների հրահրման միջավայրն առաւել պարարտ է: Եւ յատկապէս, որ հազիւ թէ Ատրպէյճանին հնարաւոր է «խաբել» խոշոր խաղացողներին, որոնք ունեն բաւարար միջոցներ պարզելու համար որեւէ լարուածութեան իրական հրահրիչին: Այդ իմաստով, Ատրպէյճանը լեզուի միջոցով հարց չէ, որ լուծում է, այլ թերեւս հետապնդում է երկու նպատակ:

Մէկը դա հայկական կողմի հանդէպ քաղաքական եւ հոգեբանական ճնշումն է, ընդ որում ոչ միայն քաղաքական ղեկավարութեան հանդէպ, այլ նաեւ հենց հանրային տրամադրութիւնների, որոնք իրենց հերթին լինելով լարուած եւ յուզական, դառնում են քաղաքական ղեկավարութեանը ներսից ճնշող հանգամանք:

Միւսը թերեւս այն է, որ այդօրինակ ապատեղեկատուական, իրական տեղեկատուական քարոզչական կամ տեղեկատուական պատերազմի գործողութիւններով Ատրպէյճանը փորձում է ստեղծել խոշոր ուժային կեդրոնների հետ «առեւտրային» դաշտ, այսպէս ասած ակնարկելով լարուածութիւն հրահրելու մտադրութեան մասին: Այստեղ ուշադրութեան է արժանի



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

«Միջազգային Հանրապետական Հիմնարկի» Հարցախոյզին Համաձայն Հայաստանցիներու 53%-ը Դրական Կարծիք Ունի Նիկոլ Փաշինեանի Մասին

«Միջազգային Հանրապետական Հիմնարկին» կողմէ 2022 թուականի Յունիսին կատարուած հարցախոյզի մասնակիցներուն 53 տոկոսը (2021թ.-45%) խիստ դրական ու դրական կարծիք ունի ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի վերաբերեալ:

Հարցուածներուն 34 տոկոսը (2021թ.-28%) խիստ դրական եւ դրական կարծիք ունի Ալէն Սիմոնեանին վերաբերեալ, 23 տոկոսը՝ (2021թ.-20%) Ռոպերթ Քոչարեանին, 23 տոկոսը՝ (2021թ.-11%) Լեւոն Տէր Պետրոսեանին, 19 տոկոսը՝ (2021թ.-10%) Սերժ Սարգսեանին, 12 տոկոսը՝ (2021թ.-9%) Իշխան Սաղաթէլեանին եւ 12 տոկոսը՝ (2021թ.-7%) Արթուր Վանեցեանի:

Հարցումներուն համաձայն՝ հարցուողները խիստ բացասական եւ բացասական կարծիք ունին հետեւեալ գործիչներուն մասին. Նիկոլ Փաշինեան-33% (2021թ.-33%), Ալէն Սիմոնեան-37% (2021թ.-40%), Ռոպերթ Քոչարեան-61% (2021թ.-57%), Լեւոն Տէր Պետրոսեան-55% (2021թ.-64%), Սերժ Սարգսեան-63% (2021թ.-69%), Իշխան Սաղաթէլեան-60% (2021թ.-47%), Արթուր Վանեցեան-64% (2021թ.-67%):

Հարցին, թէ ո՞ր քաղաքական գործիչին կամ անձին ամենաշատ կը վստահին, հարցուողները նշած են՝ Նիկոլ Փաշինեան՝ 16%, Ռոպերթ Քոչարեան՝ 3%, ոչ ոքի՝ 64%, այլ պատասխան՝ 8%:

Այն հարցին, թէ ո՞ր քաղաքական կուսակցութեանը կամ դաշինքին ձայն կու տային, եթէ խորհրդարանական ընտրութիւնները տեղի ունենային յաջորդ Կիրակի օրը, հարցուողները նշած են՝ ՔՊ՝ 25%, «Հայաստան» դաշինք՝ 6%, ՀՅԴ՝

2%, ՀՀԿ՝ 1%, չի պատրաստուիր քուէարկել հարցուածներուն 25%, ոչ ոքի՝ 15%:

Հետազոտութեան մասնակցածներու կէսէն աւելին Հայաստանի ամենակարեւոր խնդիրը անվտանգութիւնը կը համարէ, կը յաջորդեն երկրին ներսը քաղաքական անկայունութիւնն ու տնտեսական խնդիրները:

«Ի՞նչ կարծիք ունէք հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման վերաբերեալ» հարցին, 7 տոկոսը պատասխանած է՝ շատ դրական, 21 տոկոսը՝ մասամբ դրական, 11 տոկոսը՝ մասամբ բացասական, 48 տոկոսը՝ շատ բացասական, 13 տոկոսը չի պատասխանել հարցին:


«Ձեր կարծիքով, ո՞վ կը կրէ ամենամեծ պատասխանատուութիւնը Ուքրանիոյ մէջ պատերազմին համարէ» հարցին հարցուողներուն 17 տոկոսը պատասխանած է՝ ԱՄՆ-ն, 16 տոկոսը՝ բոլոր կողմերը հաւասարապէս, 14 տոկոսը՝ նախագահ Վլոյտիմիր Չելենսքին անձամբ, 10 տոկոսը՝ ՆԱԹՕ-ի անդամ երկիրները, 8 տոկոսը՝ նախագահ Վլադիմիր Փութինը անձամբ, 6 տոկոսը՝ Ուքրանիոյ իշխանութիւնները, 5 տոկոսը՝ Ռուսիան, 2 տոկոսը՝ ԵՄ-ն, 1 տոկոսը՝ այլ պատասխան եւ 20 տոկոսը չէ պատասխանած հարցին:

Հարցումը իրականացուած է ՀՌԿԿ-Հայաստանի կողմէ Միջազգային Հանրապետական Հիմնարկի Հարցումներու Հետազոտութեան կեդրոնին անունով:

Ընտրանքին մէջ ներառուած են Հայաստանի 1499 բնակիչներ, որոնք ունին բջջային հեռախօսներու հասանելիութիւն եւ 18 եւ աւելի տարեկան են:

Ընդդիմութիւնը Բռնած Է Լուսանցքայնացման Ճանապարհը. Գեորգ Պապոյեանը Ընդդիմադիրներու Պոյքոթին Մասին


«Հայաստանում թիւ 1 քաղաքական հոլովոյթները անցկացուել են, անցկացուում են եւ անցկացուելու են այս շէնքում: Բոլոր այն քաղաքական ուժերը, որոնք փողոցում չեն կարողանում 10-15 օրուայ մէջ իրավիճակ փոխել եւ չեն վերադառնում Աժ, նրանց սպառնում է լուսանցքայնացում, եւ դա փաստ է: Մեր ընդդիմութիւնը հիմա արագ բռնել է լուսանցքայնացման ճանապարհը», այս մասին Civic.am-ի հետ զրոյցին խօսելով ընդդիմութեան՝ Աժ նիստերուն չզարու մասին՝ ըսաւ Աժ «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Գէորգ Պապոյեանը:



Պատգամաւոր Գեորգ Պապոյեան

ներկայացնեն իրենց կարծիքը, հարցապնդումներ ուղղեն կառավարութեանը, նեղը գցեն Աժ իշխող խմբակցութեանը, ոչ թէ փախչեն Աժ-ից եւ ինչ-որ հիւրանոցներում, հով, գով անկիւններում դատարկ յայտարարութիւններ անեն: Սա քաղաքական կրկէս է իրականում, որտեղ իրենք այս պարագայում հիմնական դերակատարներն են», ըսաւ Գէորգ Պապոյեանը:

Հինգ Ռազմագերիներ Հայրենադարձուած Են



Հայ ռազմագերիները կը վերադառնան «Ձուարթնոց» օդակայան

Սեպտեմբեր 8-ին, Ատրպէյճանէն Հայաստան վերադարձած 5 ռազմագերիները կը հարցաքննուին ՀՀ Քննչական Կոմիտէի Զինուորական Քննչական Վարչութեան մէջ: Այս մասին տեղեկացուցած է Քննչական Կոմիտէի մամուլի քարտուղար Վարդան Թադեւոսեանը:

«Սեպտեմբերի 9-ի առաւօտեան հայրենիք վերադարձած գերիները հրաւիրուել են Զինուորական Քննչական Վարչութիւն: Այս պահին դեռ հարցաքննում են, քննութիւնն աւարտուի, դուրս կը գան», ըսաւ ՔԿ մամուլի քարտուղարը:

Նշենք, որ 5 ռազմագերիներէն 4-ը Շիրակի մարզէն են, 1-ը՝ Վանաձորէն:

Յիշեցնենք, որ շիրակցի 62

պայմանագրային զինուորներ գերեվարուած էին Արցախի մէջ՝ 44-օրեայ պատերազմի զինադադարէն յետոյ: Անոնցմէ 36-ը վերադարձած են արդէն: Այս պահի դրութեամբ 26-ը տակաւին կը պահուին Ատրպէյճանի մէջ:

Թէպէտ Ատրպէյճանը նախքան վերջին 5 ռազմագերիները վերադարձնելը կը հաստատէր իր մօտ պահուող ընդամէնը 38 գերիներու տուեալները, սակայն Ուքրանիոյ մէջ Հայաստանի դեսպան Վլադիմիր Կարապետեան Ուքրանիոյ Հանրային հեռուստառատիօնակրութեան տուած հարցազրոյցին մէջ նշած էր, որ հայկական կողմը կը համարէ, որ գերիներու շարքին պէտք է ըլլան եւս 26 զինուորական:

Ռուբէն Հախվերտեան Թեկնածու Է Երեւանի Քաղաքապետի Ընտրութիւններուն

Երեւանի աւագանիի ընտրութիւններուն Հայաստանի Եւրոպական կուսակցութեան թեկնածուն է Ռուբէն Հախվերտեանը, յայտարարած է կուսակցութեան նախագահ Տիգրան Խզմալեանը:

Երեւանի աւագանիի ընտրութիւնները տեղի պիտի ունենան մէկ տարի յետոյ՝ 2023-ի աշնան, յստակ ամսաթիւ չայտնի չէ:

Իշխող «Քաղաքացիական Պայմանագիր»ը դեռ այս տարուան Մարտին յայտարարած է, որ իրենց թեկնածուն նախկին փոխվարչապետ Տիգրան Աւինեանն է:

Մամուլին մէջ հրապարակումներ կան, որ ընդդիմութեան թեկնածուն ալ կրնան ըլլալ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի կրտսեր որդին՝ Լեւոն Քոչարեանը: Վերջինս «Ազատութեան» հետ զրոյցին ըսած էր, որ ոչինչ կը բացատրէ, սակայն այդ հարցով որոշում դեռ չունին:

Նախկին քաղաքապետ Հայկ



Երգիչ Ռուբէն Հախվերտեան

Մարութեանն ալ օրերս յայտնեց, որ ներկայացուած պիտի բեմադրէ, կը վերադառնայ թատրոնի, թէ՞ նաեւ քաղաքական բեմ, հարցին պատասխանը խոստացած է տալ Սոււրուկեանի բեմէն:

Աժ Աշնանային Նստաշրջանը Մեկնարկեց Առանց Ընդդիմադիր Խմբակցութիւններուն

Մեկնարկեց Ազգային ժողովի ութերորդ գումարման չորրորդ նստաշրջանը, օրակարգին վրայ կայ 45 հարց, այդ շարքին՝ Սահմանադրական դատարանի դատաւորներին ընտրութիւնը: Թեկնածուներն են Սեդա Սաֆարեանը եւ Յովակիմ Յովակիմեանը:

Գործող դատաւորներ Արեւիկ Պետրոսեանի եւ Աշոտ Խաչատրեանի պաշտօնավարման ժամկէտը կը լրանայ այս տարուան Դեկտեմբերին եւ կառավարութիւնն ու նախագահականը նոր թեկնածուներ առաջադրած են: Խորհրդարանական ընդդիմութիւնը չի մասնակցիր նիստին:

ԼՈՒՐԵՐ

Բանակէն Գողցած Ռեւէ Զօրավար Պիտի Զներուի. Փաշինեան

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան կը վստահեցնէ, որ բանակէն գողցած ռեւէ մէկը՝ ըլլալ գորավար, սերժանթ, թէ այլ մէկը, պիտի չներուի: Փաշինեան այս մասին ըսաւ Վլատիվոսթոքի մէջ հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ հանդիպման՝ անդրադառնալով պատերազմի հանգամանքներուն ու ելքին:

«Քրէական գործեր են յարուցուած, քննուած են: Եւ իմ զգացողութիւնն այն է, որ դրանց հետեւութիւնը լինելու է այն, որ, այո՛, կարող էր այլ ելք լինել: Եւ ես չափազանց կարեւոր եմ համարում, որ գտնենք այն պատասխանը, թէ ինչո՞ւ այդպէս չեղաւ, ինչո՞ւ այլ ելք չեղաւ: Նոյնիսկ եղած սուղ հնարաւորութիւնները պայմաններում ինչո՞ւ այդպէս դասաւորուեց ամէն ինչ: Արդեօք ինչ որ ուժեօր կային, որոնք շահագրգռուած էին պատերազմի այդ ելքով, ոչ միայն շահագրգռուած էին, այլ նաեւ ուզում էին այդպէս լինի, որպէսզի Հայաստանում քաղաքական հոլովոյթներ չարուցեն, եւ իշխանափոխութիւն տեղի ունենայ: Ես պնդում չեմ անում: Բայց ուզում եմ ասել, որ հիմա փաստեր են ի յայտ գալիս, եւ այս հարցն ինձ մօտ գնալով աւելի ուժեղանում է», ըսաւ վարչապետը:

Ան յոյս չայտնեց, որ իրաւապահ մարմինները բաւարար չափով առարկայական կը գտնուին՝ այդ հարցերուն պատասխանը գտնելու համար: Վարչապետը նշեց նաեւ, որ ոմանք 2020-2021 թուականներուն փորձ կ'ընէին տպաւորութիւն ստեղծել, թէ իշխանութիւնը եւ վարչապետը անձամբ կ'ուզեն պատերազմի հանգամանքները կոծկել: «Ոչ, հակառակը, իշխանութիւնը շահագրգռուած է, որ ճշմարտութիւնը բացայայտուի: Հիմա, երբ արդէն յստակ գործողութիւններ են լինում, այդ նոյն մարդիկ ասում են, թէ իշխանութիւնն ուզում է զցել բանակի վրայ: Ի՞նչն ենք ուզում զցել բանակի վրայ, ուզում ենք հասկանալ, թէ որտեղ ինչ է տեղի ունեցել, որովհետեւ հանգամանքներ են ի յայտ գալիս, որ ես չեմ հասկանում: Հրամանատարները հրամաններ են եղել, որ ես չեմ կարողանում հասկանալ ո՛չ քաղաքականապէս, ո՛չ բարոյապէս,

ո՛չ ռազմականապէս», ըսաւ Փաշինեան:

Ան յիշեցուց, որ իշխանութիւնը կը մեղադրէին Շուշին «տալու», «ծախելու» մէջ: «Շատ լաւ, քրէական գործ է յարուցուած: Մարդ է ձերբակալուած այդ առումով, հիմա էլ հանդէս են գալիս պաշտպանութեամբ: Հիմա ո՞վ է Շուշին տուել», նշեց վարչապետը՝ խոստանալով, որ այդ թեման պիտի չվերջանայ, այն մինչեւ վերջին թեւը պէտք է բացուի:

Ան վստահեցուց, որ չկայ աւելի շահագրգիռ ուժ, քան իշխանութիւնն է՝ պատերազմի մասին ճշմարտութեան բացայայտման համար:

Վարչապետը նաեւ նշեց, որ 2018 թուականէն յետոյ իշխանութիւնը հակայական միջոցներ ծախսած է բանակին վրայ: «Բայց հիմա պարզուած է, որ նոյնիսկ մեր պայմաններում այդ տուած միջոցները միշտ չէ, որ գնացել, հասել է այնտեղ, ուր պէտք է հասնէ: Իսկ ինչո՞ւ պէտք է ներքեւ մենք սառել մէկին՝ ինչ մետալ էլ լինի կրծքին. չկայ ներում այդ մարդկանց: Ես երբեմն տպաւորութիւն եմ ստանում, որ այդ մարդիկ ոչ թէ իմ հրամաններով են առաջնորդուել, այլ որտեղից եկող ում հրամաններով են առաջնորդուել: Դաւաճանութիւնը են խօսում. սրանից աւելի մեծ դաւաճանութիւն կա՞: Այս հարցում փոխհամաձայնութիւն չի լինելու, բանակից գողացած ոչ մի գորավար չի ներուելու, ոչ մէկը՝ լինի գորավար, սերժանթ, վարչապետ, նախագահ, նախարար, չի ներուելու», ըսաւ Փաշինեան:

Ան նաեւ յաւելեց, որ 2018-ին, հաշուի առնելով բանակին հաստատութեան կարեւորութիւնը, նուազագոյն քատրալին միջամտութիւն կատարած է բանակին մէջ: «Իմ առաջին կանխավարկածն այն է, որ ես մարդուն վստահում եմ այնքան ժամանակ, մինչեւ չվստահելու յստակ պատճառ չունեմ: Սակայն, ասել եմ՝ մի պայմանով, ով, պարզուեց, որ բանակից 1 կոպէկ գողացել է, իմ թշնամին է, մինչեւ կեանքիս վերջ հետապնդելու եմ՝ հնարաւոր բոլոր օրինական միջոցներով», ըսաւ ան՝ յաւելելով, որ հետապնդող իրաւապահ մարմիններն են:

Օգտուելով Ռուսիոյ Իրավիճակէն, Ատրպէյճանը Նոր «Վերջնագիր» Կը Ներկայացնէ Հայաստանին. Զաթուլին

«Ռուսիան դիւանագիտական ճանապարհով կը փորձէ խաղաղութեան հասնիլ Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ», ըսած է Պետտոմայի ԱՊՀ հարցերով կոմիտէի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Զաթուլինը:

Ռուս պատգամաւորը նաեւ յաւելած է, որ հիմա այդ ընելը հեշտ չէ, քանի որ Պաքուի թիկունքին կանգնած է Թուրքիան: Նախօրէին Հայաստանը դիմած էր Ռուսիոյ՝ Ատրպէյճանի հետ սահմանին իրավիճակի սրման պատճառով:

Զաթուլին կը կարծէ, որ Ատրպէյճանը կ'օգտուի Ռուսիոյ մէջ տեղի ունեցող ռազմական գործողութիւններուն մէջ Ռուսիոյ մասնակցութենէն եւ նոր «վերջնագիր» կը ներկայացնէ Հայաստանին: «Հրետակոծութիւնները, ցաւօք, տիւրը իրողութիւն են, որ կ'ուղեկցին հայ-ատրպէյճանական յարաբերութիւնները՝ երկար տարիներ, բայց յստակապէս՝ երկու տարի վաղեմութեան պատերազմէն ի վեր:

Այս պատերազմիցէն յետոյ Ատրպէյճանը կ'օգտագործէ բոլոր ճանապարհներն ու միջոցները՝ Ղարաբաղի համար պայքարին մէջ Հայաստանի պարտութենէն հնարաւորինս շատ օգուտներ քաղելու համար: Ատրպէյճանին՝ շրջաններու յանձնումէն յետոյ, սա արդէն շարք մը հետեւանքներու յանգեցուցած է, բայց Ատրպէյճանին, ըստ ամենայնի, այդ ամբողջութեամբ չի բաւարարեր. ան աւելին կ'ուզէ եւ կ'օգտագործէ այն հանգամանքը, որ ուրբանական իրադարձութիւններուն մէջ ներքաշուած Ռուսիան բարդ իրադրութեան մէջ է՝ իր պահանջները ներկայացնելու համար, որոնք շատ նման են վերջնագիրի: Ինձի կը թուի, որ մենք կը քաղենք երկու տարի առաջ տեղի ունեցածին հետեւանքը:

Կը կարծեմ, որ այստեղ դեռ պէտք է հասկնանք Թուրքիոյ դերը,



Պետտոմայի ԱՊՀ հարցերով կոմիտէի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Զաթուլին

որ, որպէս կանոն, կանգնած է Ատրպէյճանի բոլոր գործողութիւններու ետին»: Պատգամաւորը կարծիք յայտնած է նաեւ, որ Ռուսիան ձեռնպահ կը մնայ ռազմական գործողութիւններուն միջամտելէ, բայց պէտք է «սանձէ Ատրպէյճանը»: Ըստ անոր, ռուսական խաղաղապահ ուժերուն առկայութիւնը Արցախի տարածքին արդէն իսկ ուժի կիրառում է:

Կոնստանտին Զաթուլինը նաեւ կարծիք յայտնած է, որ Ռուսիան պէտք է ամէն ինչ ընէ, որպէսզի ձեռնպահ մնայ ռազմական գործողութիւններուն մէջ անմիջական ներգրաւուածութենէն, բայց պէտք է ամէն ջանք գործադրէ՝ Ատրպէյճանին «հանգիստ վարքագիծ» ստանալու համար.

«Բայց այն պայմաններուն մէջ, երբ Թուրքիան կանգնած է Ատրպէյճանի թիկունքին, անոր դժուար է հասնիլ: Ռուսիան դիւանագիտական ճանապարհով կը փորձէ յառաջընթաց արձանագրել խաղաղութեան պայմանագրին ուղղութեամբ»:

165 Երկիրներու Շարքին Հայաստանը 11-րդն Է Տնտեսական Ազատութեան Ցուցակով

«Ֆրէզզըրի» հիմնարկին կողմէ հրատարակուած է «Աշխարհի Տնտեսական Ազատութեան 2022-ի Տարեկան Զեկոյց»-ը, որուն մէջ Հայաստանը գրաւած է 11-րդ դիրքը, ինչ որ հիմնարկին կողմէ Հայաստանին երբեք տրուած ամենաբարձր արդիւնքն է: Հայաստանի վարկանիշը 10 հնարաւորէն կազմած է 7.84 միավոր:

Զեկոյցը հիմնուած է 2020-ի տարեկան ցուցանիշներուն վրայ եւ կ'ընդգրկէ աշխարհի 165 երկիր: Տնտեսական ազատութեան ցուցակը կը չափէ երկիրներու տնտեսական ազատութեան աստիճանը՝ վերլուծելով շարք մը ցուցանիշներ եւ ներառելով 5 հիմնական ուղղութիւններ, ինչպիսիք են՝ կառավարութեան որոշումներու կայացման տնտեսական հենքերը, իրաւական համակարգը եւ սեփականութեան իրաւունքները, ազգային արժուէրի յուսալիութիւնը եւ սղաճի նկատ-



մամբ դիմադրողականութիւնը, միջազգային առեւտուրին մէջ ազատութեան մակարդակը, աշխատանքի եւ առեւտուրի կարգաւորման հետ կապուած հարցերը:

Ատամ Շիֆ ԱՄՆ Գոնկրէսին Սէջ Բանաձեւ Պիտի Ներկայացնէ՝ Ատրպէյճանին Կոչ Ընելու Դադրեցնելու Հայաստանի Ու Արցախի Դէմ Յարձակումները

Ատամ Շիֆ Գոնկրէսին մէջ պիտի ներկայացնէ բանաձեւ, որով Ատրպէյճանին կոչ պիտի ընեն անյապաղ դադրեցնելու յարձակումները Հայաստանի եւ Արցախի դէմ:

Այս մասին յայտարարած է ԱՄՆ Գոնկրէսի անդամ Ատամ Շիֆ:



«Յառաջիկայ օրերուն ես կը նախատեսեմ Գոնկրէսի քննարկման ներկայացնել բանաձեւ՝ կոչ ընելով Ատրպէյճանին անյապաղ դադրեցնելու յարձակումները Հայաստանի եւ Արցախի

վրայ, ընդգծելով Հայաստանի ինքնիշխանութեան կարեւորութիւնը եւ պահանջելով ամբողջովին արգիլել ԱՄՆ-ի օգնութիւնը Ատրպէյճանին», գրած է ան:

Հանրապետության Նախագահ Վահագն Խաչատուրեանի Յայտարարումները

Յարգելի հայրենակիցներ, Սիրելի ժողովուրդ, Սեպտեմբերի 13-ին ատրպէյջանական զինուած ուժերը լայնածաւալ ռազմական գործողութիւններ են սանձազերծել հայ-ատրպէյջանական սահմանի երկայնքով՝ հրետանու, ԱԹՄ-ների եւ խոշոր տրամաչափի զինատեսակների կիրառմամբ՝ զնդակոծելով հայկական դիրքերը, խաղաղ բնակավայրերը ու ենթակառուցուածքները, ինչի հետեւանքով հայկական կողմն ունի տասնեակ զոհեր եւ վիրաւորներ, հասցուել է զգալի վնաս շինութիւններին եւ կառուցներին:



ՀՀ Նախագահ Վահագն Խաչատուրեան

րած քայլին ամբողջականութեան սկզբունքի կոպտագոյն խախտման, խաղաղութեան օրակարգի խախտմանն ուղղուած յարձակման վերաբերեալ:

Յորդորուած եմ մեր քաղաքացիներին, Հայաստանի բոլոր քաղաքական ուժերին, կուսակցութիւններին եւ հասարակական կառուցներին զիտակցելով պահի լրջութիւնն ու հրամայականը, մի կողմ թողնել քաղաքական տարաձայնութիւններն ու հակասութիւններն ու միահամուռ կերպով, անվերապահօրէն նեցուկ կանգնել Հայաստանի Հանրապետութեան Զինուած Ուժերին ու հանրային միասնութեանը:

Մեր հայրենիքը համախմբման ու պաշտպանութեան կարիք ունի եւ ստեղծուած իրավիճակում մեզ բոլորիս պէտք է միաւորի մեր երկրի պաշտպանութեան, սահմանների անխախտարեւութեան, ինքնիշխանութեան եւ անվտանգութեան ապահովման նուիրական գործը:

Իմ խորին ցաւակցութիւններն եմ յայտնում մեր զոհուած զինծառայողների ընտանիքներին եւ հարազատներին, մաղթում ուժ ու կորով, իսկ վիրաւորներին՝ շուտափոյթ ապաքինում:

Դիմում եմ Հայաստանի միջազգային գործընկերներին՝ դատապարտել ատրպէյջանական զինուածի կողմից Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքի նկատմամբ ոտնձգութիւններն ու սադրանքները, կոչ անելով միջազգային իրաւունքի կանոններին համաձայն հարկադրել Ատրպէյջանի ռազմաքաղաքական ղեկավարութեանը հրաժարուել ուժի կիրառման սպառնալիքի եւ բռնութեան սանձազերծման գործելուտճից:

Ակնկալում եմ, որ ՀԱՊԿ մեր գործընկերները, ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը, ԵԱՀԿ համապատասխան կառուցները ու միջազգային հանրութիւնը միասնական՝ համարժէք եւ հասցեական զնահատականներ կը հնչեցնեն Ատրպէյջանի կողմից միջազգային իրաւունքի հիմնարար՝ տա-

Համաշխարհային Դրամատուրդ Պատրաստական Է Շարունակելու Օժանդակութիւնը ՀՀ Կառավարութեան. Աննա Պիերտէն՝ Նիկոլ Փաշինեանին



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Համաշխարհային դրամատան Եւրոպայի եւ Կեդրոնական Ասիոյ տարածաշրջանի փոխնախագահ Աննա Պիերտէնը եւ անոր գլխաւորած պատուիրակութիւնը:

Վարչապետը կարեւորած է Հայաստան-Համաշխարհային դրամատան գործընկերութիւնը, որուն 30-ամեակը կը լրանայ այս տարի Սեպտեմբերին, եւ որու ծիրին մէջ Հայաստանի մէջ կ'իրագործուին տնտեսութեան զարգացման ուղղուած ծրագիրներ՝ թէ՛ պետական, թէ՛ սեփական հատուածներուն մէջ:

Նիկոլ Փաշինեան նշած է, որ ՀՀ կառավարութեան ծրագրի առաջնահերթութիւններու շարքին են կրթութեան, ենթակառուցուածքներու, կառավարման, թուայնացման ոլորտներու բարեփոխումները, եւ անոնց յաջող իրականացման գործումին մէջ Համաշխարհային դրամատունը Հայաստանի կարեւոր գործընկերներէն է:

Համաշխարհային դրամատան փոխնախագահը շնորհակալութիւն յայտնած է ՀՀ վարչապետին բարձր զնահատականին համար եւ շնորհաւորած է փոխհասակցութիւնը:

Տիեզերք Արձակուած Հայկական Արբանեակը Կ'աշխատի Եւ Լուսանկարներ Կ'ուղարկէ



SATLANTIS-ի համահիմնադիր եւ գլխաւոր տնօրէն, գիտնական Խուան Թոմաս Դերնա մամլոյ ասուլիսի ընթացքին

Բարձր արհեստագիտութեան արդիւնաբերութեան նախարարի առաջին տեղակալ Գէորգ Մանթաշեան եւ SATLANTIS-ի համահիմնադիր եւ գլխաւոր տնօրէն, գիտնական Խուան Թոմաս Դերնան մանրամասներ ներկայացուցին Հայաստանի՝ տիեզերք արձակուած առաջին արբանեակի՝ «ArmSat-1»-ի մասին: Ասուլիսի ընթացքին «Արմենփրես»-ը հետաքրքրուեցաւ, թէ Հայաստանի առաջին արբանեակին արձակումը ի՞նչ արդիւնք տուելու է, լուսանկարները կ'ա՞ն, թէ՞ ոչ, եթէ այո՛, ապա ե՞րբ անոնք պիտի հրատարակուին:

«Արբանեակն աշխատում է, լուսանկարները կան, բայց չենք կարծում, որ ներկայումս կարիք կայ այդ մասին բարձրաձայնել: Կան պատճառներ: Գիտենք, որ արբանեակը կայ, գիտենք, որ աշխատում է, գիտենք, որ գործողութիւններ կատարում է: Ովքեր կ'աշխատեն նախագծի հետ, նրանք կ'իմանան», պատասխանեց Մանթաշեան:

«Արմենփրես»-ը նաեւ հետաքրքրուեցաւ, թէ արդեօք Հայաստանը կ'աշխատի՞ «գուպարներ» արձակելու ուղղութեամբ: Մանթաշեանը պատասխանեց, որ Բարձր Արհեստագիտութեան Արդիւնաբերութեան Նախարարութեան ռազմավարութիւնը դեռ վերջնական հաստատուած չէ, սակայն կրնայ

ըսել, որ «STARMUS»-ի շրջանակներուն մէջ կը ճշգրտուին նախարարութեան առաջնահերթութիւնները: «Նման նախագծերը պահանջում են պայմաններ, մենք այդ պայմանները պարտաւոր ենք ստեղծել «գուպարներ»ի համար եւ ապահովել», ըսաւ Մանթաշեան:

Տիեզերական արհեստագիտութիւններով զբաղող սպանական SATLANTIS-ի համահիմնադիր եւ գլխաւոր տնօրէն, գիտնական Խուան Թոմաս Դերնանին իր հերթին նշեց, որ այն ամէնը, ինչ կը նախատեսուի իրականացնել, երկրաժամկէտ գործողութիւններով ծրագրի է:

«Արդէն առաջին քայլը կատարուած է, եւ արբանեակը արձակուած է տիեզերք: Ամէն շաբթուայ կտրուած քով կ'ընենք նախատեսուած գործողութիւնները, որովհետեւ տիեզերական գործունէութիւնը կ'ենթադրէ յստակ ժամանակացուցով կատարուող քայլարշաւ: Առաջին քայլէն յետոյ ունինք երկարաժամկէտ ծրագիրները, յաջորդ քայլը պիտի ըլլայ, մասնաւորապէս, հայկական արտադրութեան արբանեակներու գործարանի ստեղծումը: Ակնյայտ է, որ այս երկարաժամկէտ եւ մեծածաւալ ծրագիրները պէտք է համադրել ըլլան մուտքային տուեալներու եւ միջոցներու ներգրաւման հետ», ըսաւ Դերնանին:

կերութեան 30-ամեակին առթիւ: Աննա Պիերտէն անդրադարձած է համատեղ ծրագիրներուն՝ արդիւնաւէտ զնահատելով անոնց ընթացքը եւ մեր երկրի տնտեսական յառաջընթացին բերած նպաստը: Ան նշած է, որ Համաշխարհային դրամատունը պատրաստակամ է շարունակելու օժանդակութիւնը ՀՀ կառավարութեան՝ գործունէութեան ծրագրով նախանշուած առաջնահերթութիւնները կեանքի կոչելու ուղղութեամբ:

Զրուցակիցները գոհունակութիւն յայտնած են երկկողմ գործընկերութեան շրջանակին մէջ առ այսօր կատարուած աշխատանքներէն եւ միտքեր փոխանակած են անոր զարգացման հեռանկարներուն շուրջ: Երկուստեք կարեւորուած է կրթութեան, ենթակառուցուածքներու, դատաիրաւական, թուայնացման, առողջապահութեան, հանրային կառավարման եւ այլ ուղղութիւններով փոխգործակցութիւնը: Նշուած է հաստատութեան կարողութիւններու հզօրացման եւ մարդկային դրամազուլիսի զարգացման ծրագիրներուն անհրաժեշտութիւնը:

Վարչապետը ընդգծած է կրթութեան ոլորտի բարեփոխման առաջնահերթութիւնը, քանի որ մարդկային դրամազուլիսը կարեւորագոյն միջոցն է, եւ կրթութիւնն է որեւէ բարեկարգումի յաջողութեան հիմքը: Նիկոլ Փաշինեանի խօսքով՝ այս տեսլականը դրուած է կառավարութեան ծրագրի հիմքին, որու իրականացման ուղղութեամբ ալ Գործադիրը հետեւողականօրէն յառաջ կը շարժի:

Բարեկարգումները յաջողելու ծիրին մէջ, կառավարութեան ղեկավարը կարեւորած է նաեւ հաստատութեան կարողութիւններու հզօրացման միտուած ծրագիրները՝ դատական ոլորտէն մինչեւ հանրային կառավարում:

Վարչապետ Փաշինեան երախտագիտութիւն յայտնած է Համաշխարհային դրամատան, դրամատան հայաստանեան գրասենեակին արդիւնաւէտ գործընկերութեան համար եւ վերահաստատած է կառավարութեան պատրաստակամութիւնը՝ զարգացնելու եւ հարստացնելու գայն փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող նախաձեռնութիւններով:

«Հրանդի Ընկերները» կը Զօրակցին Կարօ Փայլանին

Հրանդ Տինքի սպանութենէն ետք դատական գործընթացին բժախնդիր լրջութիւնով հետեւող եւ այս նիւթի շուրջ կատարած յայտարարութիւններով հասարակութիւնը իրազեկող «Հրանդի Ընկերները» հարթակը այս անգամ ալ յայտարարութիւնով մը կը գորակցի Թուրքիոյ Խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլանի:



Վերջին տարիներուն նախկին աւագակապետ Սետաթ Փեքեր իր ապաստանած վայրէջ կատարած նախ վիտիօ տեսանիւթերով եւ ապա «Թուրքիոյ» եւս գրառումներով լուրջ փորձանք մը դարձած է գործող իշխանութեան համար:

Փեքեր անհերքելի փաստերով վրայ կը հիմնէ իր պնդումները, որոնք բացարձակ լուրջեամբ կը դիմաւորուին իշխանութիւններու կողմէ:

Ան վերջերս հրապարակուածներ ունեցաւ նախկին զինուորականի մը՝ Լեւենդ Կէօքթաշի հասցէին: Այս հրապարակումէն ետք մի ալ աւագակապետի՝ Ալախատտին Չաքըճըի նախընտրական պաշտպանական Մեհմետ Սինան Ինճէ եւս համացանցի միջոցաւ հրապարակեց զգալի քանակութեամբ պնդում մը: Այդ պնդումի համաձայն 2016 թուին Լեւենդ Կէօքթաշ Խորհրդարանի մէջ մահափորձ պիտի կատարէր Կարօ Փայլանին դէմ:

Այս պնդումէն ետք Կարօ Փայլանի հարցաքննութեան պահանջով դիմում կատարեց Անգարայի Դատախազութեան: Այս դիմումէն ետք Մեհմետ Սինան Ինճէ շարունակեց իր սպառնական գրառումները:

«Հրանդի Ընկերները» այդ գարգացումները նշելով պախարա-

կեցին դատական մարմիններու պահած լուրջութիւնը եւ գորակցութիւն յայտնեցին Կարօ Փայլանին:

Կատարուած յայտարարութեան մէջ նշուած է թէ Կարօ Փայլան առաջին օրէն իսկ հարթակի յառաջատար գործիչներէն եղած է եւ 2015 թուականէն սկսեալ մեծ աշխուժութեամբ արդարութեան պայքար կը տանի նաեւ Թուրքիոյ Խորհրդարանին մէջ իբրեւ ընտրուելու երեսփոխան: «Անընդունելի է բացայայտ կերպով հրապարակուած մահափորձի եւ ապա շարունակուող սպառնալիքներու դէմ դատախազութեան անդրդուելի կեցուածքը: Կարօ Փայլան ժողովուրդի ձայներով ընտրուած պատգամաւոր մըն է: Անոր ուղղուած սպառնալիքը ուղղուած է նաեւ ժողովուրդի կամքին: Կարօ Փայլան ընդմիջած մերժած է գոհի կամ հերոսի կերպարը: Ան միայն խաղաղութեան եւ արդարութեան դրօշակակիրը եղած է եւ մենք կը շարունակենք իր կողքին մնալ»:

Անկախութեան Պայքարը Կը Շարունակուի

Շարունակուած էջ 1-էն

նի Պլինքըն, որ յիշատակեց հայկական տարածքներու եւ ենթակառոյցներու ռմբակոծութիւնը, յստակ դարձնելով, որ Միացեալ Նահանգները մեղաւոր կը գտնէ ատրպէյճանական կողմը: Ներկայ կացութեան առջեւ Հայ ժողովուրդը, ինչպէս դարերու ընթացքին, ստիպուած է ապաւինելու իր սեփական ուժերուն: Ռազմական վերջին գործողութիւններուն պատկերը տակաւին ամբողջովին յստակ չէ, սակայն կը թուի թէ Ատրպէյճանական բանակը չէ յաջողած հասնիլ իր նպատակներուն: Հայկական զինուած ուժերը կարողացած են արիւթաբար դիմադրել ու կասեցնել թշնամիի յառաջխաղացքը ի գին մեծ թիւով զոհերու եւ վիրաւորներու:

նի իշխանութեան վերատիրանալու ճանապարհին:

1991 թուականի Սեպտեմբեր 21-ին, Հայաստանի ժողովուրդը աւելի քան 99 տոկոսով քուէարկեց անկախութեան ի նպաստ: Անցնող 31 տարիներուն մեր Հայրենիքը անցաւ յաջողական վերիվայրումներու ընդմէջէն ու ապրեցաւ բազմաթիւ յուսախաբութիւններ, նկատի առնելով որ, չիրականացան անկախութեան հետ կապուած շատ մը յոյսերն ու ակնկալութիւնները: Սակայն վերջին երկու տարիներուն 44 օրեայ պատերազմէն ասդին, մեր ժողովուրդին համար եղաւ ամենէն ծանր ու յուզումալիցը: Վրէժխնդրութեամբ լեցուած թշնամին օգտագործելով իր ռազմական ու տնտեսական առաւելութիւնները կը փորձէ ծուկի բերել մեր ժողովուրդը: Ան պիտի շարունակէ իր այս ընթացքը՝ մերք Հայաստանի սահմաններուն ուղղութեամբ, մերք՝ Արցախի:

Իսլամական նման ընդարձակ ովկիանոսին մէջ հայը անկարող պիտի ըլլար դիմանալ եւ հետեւաբար պիտի բնաջնջուէր՝ այս կամ այն կերպով: Ուստի, նկատի ունենալով այս պարագան, ինչպէս նաեւ այն՝ որ ժէօն Թուրքերը կը պնդէին «Միդհատեան» Սահմանադրութեան վրայ եւ չէին ուզեր Հայկական Հարցը ճանչնալ, Հնչակեան կուսակցութիւնը առաջին մէկ օրէն վերապահ գտնուեցաւ անոնց հանդէպ եւ ընդհակառակը, պայքար բացաւ անոնց դէմ:

Ահմէտ Ռիզան իր դիմումները կը կրկնապատկէ Հնչակեան ղեկավարութեան մօտ, մասնաւոր Սասունի ապստամբութեան օրերուն, երբ Հնչակեանութիւնը հսկայ ժողովրդականութիւն ձեռք ձգած էր:

Տեսակցութիւնը տեղի կ'ու-



Ստեփան Սապա Գիւլեան

նենայ Ս. Սապա-Գիւլեանի եւ Ահմէտ Ռիզայի միջեւ: Ահմէտ Ռիզային կ'ընկերանար նաեւ Տոքթոր Նազըմ:

Երիտասարդ Թուրքերու ներկայացուցիչները կ'առաջարկէին Հնչակեաններուն՝ հրաժարիլ Եւրոպայի կամ Ռուսիոյ հետ գործակցելէ եւ անոնց միջնորդութիւնը ուղեւէ եւ գոհանալ «Միդհատեան» Սահմանադրութեամբ եւ միասնական ուժերով պայքարիլ այդ ուղղութեամբ: Անոնք Մայիսեան բարեփոխումներու ծրագիրը կը համարէին «անջատողական» եւ իրենց համար անընդունելի, մանաւանդ անոր համար, որ ան «թելադրուած էր» օտար պետութեանց կողմէ: Մասնաւորաբար այս վերջին պարագան կատաղութիւն կը պատճառէր Երիտ. Թուրքերուն:

Ահմէտ Ռիզան եւ իր ընկերները այս ուղղութեամբ փրփականս կ'ընեն նաեւ ֆրանսական հասարակութեան մէջ: Բացի Թերթերու մէջ հրատարակուած յօդուածներէն, անոնք յաջողած էին թափանցել նաեւ կառավարական շրջանակներէ ներս եւ իրենց գաղափարներու շուրջ համակիրներ գտած:

Միւս կողմէ, Հնչակեանները կ'աշխատին իրենց հետ ունենալով ֆրանսական քաղաքական եւ լրագրական շրջանակներէ բաւական թիւով համակիրներ, «էքոլ տէ Սեանս Փոլիթիք»-ին մէջ կը յաջողին հրապարակել հայանպաստ յօդուածներ:

Հնչակեան կուսակցութեան եւ Իթթիհատի միջեւ սկսած տարակարծութիւնը երթալով խորացաւ եւ փոխուեցաւ պայքարի, երբ հետագային յայտնի եղան եւ հաստատուեցան նաեւ այդ կուսակցութեան համաթուրանական եւ համաիսլամական միտումները եւ յաճախ քողարկուած, սակայն երբեմն բացայայտ հակահայ տրամադրութիւնները:

Փարիզ հաւաքուած Իթթիհատական ղեկավարները քանիցս Հնչակեան կուսակցութիւնը իրենց կառքին լծելու փորձերը ձախողած տեսնելով, կը սկսին բռնու պայքար մղել անոր դէմ: Իթթիհատականները կը մեղադրէին Հնչակեանները՝ իրենց բռնած անջատողական քաղաքական համար: Հնչակեան կուսակցութիւնը չէր բաժնէր «Միդհատեան» սահմանադրութեան ծրագիրը եւ կը պնդէր Մայիսեան ծրագիրն իր իրաւունքը, ընդհակառակը՝ Մայիսեան ծրագիրը կը նկատէին օտար պետութիւններու կողմէ պարտադրուած, եւ կը մերժէին բացարձակապէս:

Իթթիհատականները ձեռք կ'առնեն եւրոպական մամուլը եւ անոր միջոցով կը ջանան ազդեցութիւն բանեցնել Սուլթանին վրայ, որպէսզի խաղաղ միջոցներով լիչեալ սահմանադրութիւնը գործադրել տան: Իթթիհատականները այդ ճակատին վրայ ալ իրենց դէմ կը գտնեն Հնչակեանները, որոնք արթուն կերպով կը հետեւէին անոնց ամէն մէկ քայլին եւ կու տային համապատասխան հակահարուածը:

Սուլթան Համիտ կը կազմակերպէ նոր հալածանքներ եւ ջարդեր՝ հայ յեղափոխութեան ընթացքը դանդաղեցնելու եւ կասեցնելու համար: Փարիզի մէջ Հնչակեան կուսակցութիւնը ա'լ աւելի եռանդուն կերպով կը շարունակէ պայքարը՝ մէկ կողմէ Սուլթանի գործակալներուն, միւս կողմէ Իթթիհատի դէմ: Մամուլի մէջ տարուած քարոզչութեանց զուգընթաց կը կազմակէ դասախօսական մեծ միթիւններ՝ «Կրանտ Օրիան» սրահին մէջ, ուր խօսելու կը հրաւիրուին Լոնտոնէն՝ Ա. Նազարբեկ: Ժողովին կը նախագահէ Սապա-Գիւլեան: Ներկայ կ'ըլլան հայ, ֆրանսացի ունկնդիրներ եւ գրեթէ բոլոր Իթթիհատական շէֆերը: Դասախօսութեան պահուն՝ Նազարբեկ կը հանէ գրպանէն Զէյթունի մարտիկներէն նոր ստացուած եւ կարմիր մելանով գրուած նամակ մը, որով կը յայտնէր թէ՛ Թուրք ուժերը պարտուած են: Սրահը կը թնդայ ուրախութեան աղաղակներով, մինչ կատաղութեամբ կը լեցուին Իթթիհատականները, որոնց պարագլուխը՝ Ահմէտ Ռիզան, ոտքի կը ցատկէ եւ հայհոյակից խօսքեր կ'ուղղէ Սուլթանի հասցէին, որ չէր կրցած զսպել այստամբութիւնը: Միթիւնը կը վերջանայ ընդհանուր ոգեւորութեան եւ յարթական տրամադրութեան մէջ: Սակայն, Հնչակեանները, չեն կրնար գոհանալ այսքանով, որովհետեւ Իթթիհատականներու «Մէշվէրէթ» թերթը կը սկսի ծանր լուտանքներով պատասխանել Հնչակեան այս գործունէութեան:

Հնչակեան կուսակցութիւնը քայլ առ քայլ կը հետեւէր Եւրոպայի Երիտասարդ Թուրքներու գործունէութեան եւ ուր որ պէտք էր՝ կը հասցնէր պատշաճ հարուածը: Դիւանագիտական այս պայքարը շարունակելով կը շարունակուի մինչեւ Օսմանեան կեղծ Սահմանադրութիւնը եւ անկէ ետքն ալ՝ Հնչակեան կուսակցութիւնը կը մնայ եւ կը ճանչցուի որպէս ընդդիմադիր տարր՝ ժողովուրդին եւ Երեսփոխական կողմից ժողովուրդին մէջ, ամենուրեք իր դէմ ունենալով Իթթիհատը:

Սուլթան Համիտի հալածանքներէն՝ հետզհետէ Փարիզ կը հասնին իշխան Սապահ-Ատիւնը, իր հայրը եւ կրտսեր եղբայրը: Ասոնք Սուլթանի դէմ լեցուած էին անզուսպ ատելութեամբ մը, հետեւաբար կը միանան Իթթիհատին: Այդ օրերուն Իթթիհատ որդեգրեց բոլոր դժգոհ տարրերը համախմբելու գաղափարը, որոնց համագործակցութեամբ կարելի պիտի ըլլար տապալել Սուլթանականութիւնը: Ո'չ դասակարգի, ո'չ ազգութեան եւ ո'չ ալ կրօնքի մէջ խտիր պէտք էր դրուէր, գլուխ հանելու համար այս ծրագիրը: Իթթիհատականները կ'որոշէին նաեւ համաժողովի մը հրաւիրել Թուրքիոյ բոլոր բաղկացուցիչ եւ դժգոհ տարրերը: Հնչակեան կուսակցութիւնը կտրուկ կերպով կը մերժէ որեւէ ձեւով մասնակցիլ նման համաժողովի մը, որ կը ղեկավարուէր Ալի Ֆախրիի եւ Հիւսէյն Պէյ Տուճանլիի պէս համաիսլամութեան եւ համաթուրանականութեան շովէն առաքեալներուն կողմէ:

Իթթիհատականները կը յաջողին սակայն Դաշնակցութեան եւ պահպանողական կարգ մը տարրերու մասնակցութիւնը ապահովել Համագումարին, որուն կը ներկայանայ յատուկ պատուիրակութիւն մը կազմուած՝ Ա. Ահարոնեանէ, Միւսա Չերազէ եւ Կ. Պասամեանէ:

Դաշնակցութեան նախաձեռնութեամբ՝ Համագումարին մասնակցող այս պատուիրակութիւնը կը պնդէ սակայն Հնչակեան տեսակէտին վրայ, որ է՝ գործադրութիւնը Պերլինի դաշնագրի ճշգրտութիւնը եւ Մայիսեան ծրագիրը:

Ահմէտ Ռիզայի կուսակցութիւնը կատաղութեամբ կը լեցուի, երբ կը տեսնէ նորէն Հայկական Դատի մը հետապնդումը հայերու կողմէ: Տարակարծութիւնը երեւան կու գայ եւ հայ պատուիրակութիւնը կը հեռանայ Համագումարէն:

Երիտասարդ Թուրքերը ամէն կերպով կ'ուզէին ապահովել Հնչակեաններու գործակցութիւնը եւ բարեկամութիւնը: Այս պարագան քանի մը պատճառներ ունէր: Նախ՝ Հնչակեան կուսակցութիւնը առաջին մարտական կուսակցութիւնը եղաւ, որ կազմակերպուած միջոցներով զէնք բարձրացուց Սուլթանականութեան դէմ: Ապա՝ ունէր լայն ժողովրդականութիւն եւ վարկ՝ յեղափոխական եւ օտար շրջանակներուն մէջ: Եւ յետոյ, ունէր արիւնով ձեռք բերուած փորձառութիւն մը, որ շատ թանկարժէք էր Թուրքիոյ նորելու «յեղափոխականներուն» համար:

Այս պատճառով ալ Իթթիհատ, առանց յուսահատելու՝ նոր դիմումներ կ'ընէ Հնչակեան ղեկավարներուն մօտ՝ մասնաւոր տեսակցութիւններով հակացողութեան եզր մը գտնելու համար:

Տեսակցութեանց կը մասնակցէին՝ Ս. Սապահ-Գիւլեան եւ Մուրատ, իսկ Իթթիհատականներէն՝

Յաջողած է Նպատակը



ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Տարուայ օրերու իմաստները վերջիչելու համար կան զանազան միջոցներ: Կարելի է օգտուել զանազան մամուլի մէջ լոյս տեսնող «պատմութեան մէջ այս օրը» խորագրեալ յուշերէն: Նոյնպէս կարելի է օգտուել սեփական միջոցներով պատրաստուած օրագրութեան մը՝ ուր նոյնպէս նշուած են յիշելու արժանի զանազան երեւոյթներ:

Մենք ունինք աւելի յատուկ եղանակ մը: Ուրիշներ արդէն նկատած կ'ըլլան յիշատակման արժանի թուականները եւ մեզ կը դիմեն մեկնաբանութիւն պահանջելով:

Այս շաբաթ նոյն օրուան մէջ հիւրընկալեցինք այս բնոյթի երկու լրագրողական խումբեր: Անոնք ճամբորդներ բեռնած իմբազրատուն այցելեցին: Այդ ճամբորդներու բեռն էր տեսախցիկներ, եռօտանիներ, լուսաւորութեան եւ ձայնագրութեան սարքաւորումներ: Իւրաքանչիւր աշխատանքի իր յատուկութիւնները ունին: 5 կամ 10 վայրկեան տեւողութեամբ նկարահանումի մը նախապատրաստութիւնը կրնայ մէկ ժամ եւ նոյնիսկ աւելի աշխատութիւն պահանջել: Իսկ շաբաթուայ յիշատակման օրերն էին խորհրդակցական Համաշխարհային Օրը՝ 1 Սեպտեմբեր ու 6-7 Սեպտեմբեր 1955-ի պատահարները: Մանաւանդ այս երկրորդը վերջին տարիներուն այնքան մեծ ուշադրութեան արժանացած է որ այլեւս հետզհետէ անիմաստ կրկնութեան երեւոյթ կը ստանան «ի՞նչ եղաւ», «ինչպէ՞ս եղաւ» ի նման հարցումները: Նիւթին հետ հարեանցի հետաքրքրութիւն ունեցողները իսկ այլեւս իմացան թէ այդ դժբախտ թուականին ինչեր պատահեցաւ Պոլսոյ մէջ:

Բայց տակաւին արժանի կերպով չէ քննարկուած թէ այդ կատարուածը ի՞նչ հետեւանք ունեցաւ: Կարծես այս պահուն ահա այս երկրորդ հարցումը շատ աւելի էական է:

Ամենապարզ բացատրութիւնով կարելի է ըսել թէ 6-7 Սեպտեմբեր 1955 թուականը Պոլսոյ թրջաց-

ման խորհրդանիշն է: Ճիշդ է որ Օսմանեան կայսրը 1453 թուականին արշաւեց այս քաղաքը գայն վերածելով իր թագաւորութեան մայրաքաղաք: Բայց այդքանը բաւարար չէր որ Բիւզանդիոնի մայրաքաղաքը մէկ օրէն միւսը թրջացած ըլլար: Վերջապէս քաղաքի բնակչութիւնը յոյներն էին եւ նոյնիսկ թագաւորը փոխուած ըլլալ, անոնք կը շարունակէին գոյատեւել իրենց հայրենի երկրին մէջ: Թէեւ Օսմանեան սուլթանը քաղաքի բնակչութեան մէջ որոշ հաւասարակշռութիւն մը ապահովելու համար բազմահազար հայեր տեղադրեց Պոլիս եւ նոյնիսկ հիմնեց Պատրիարքարան մը, քաղաքը յաջողեցաւ մինչեւ 1955 պահել իր յունական դիմագիծը:

Կառուցուած մեծ մզկիթները, պայտաները եւ ապարանքները բաւարար չեղան քաղաքի ուրոյն դիմագիծը փոխելու համար: Օսմանեան կայսրերու համար կարեւոր եղածը իրենց տիրապետութիւնն էր, այլ ո՛չ թէ քաղաքի ոգին: Այդ մասին մտահոգութիւնները աւելի յստակացան հանրապետութեան շրջանին, երբ երբեմնի բազմազգի եւ բազմամշակութային կայսրութիւնը կը վերածուէր ազգային պետութեան: Այն ատեն էր որ խստիւ կ'արգիլուէր քաղաքի պատմական անունին կոստանդնուպոլիսին գործածութիւնը: Բայց նոյնն էր, քաղաքը յաջողած էր պահել իր պատմական դիմագիծը:

Մինչ այդ հագիւ մէկ միլիոն բնակչութիւն ունեցող քաղաքի մէջ հայ, յոյն եւ հրեայ փոքրամասնութիւնները աւելի քան 300 հազար բնակչութիւնով լուրջ համեմատութիւն մը կը կազմէին: Երկօրեայ վայրագութիւնը ճակատագրական եղաւ եւ անցնող 60 տարիներու ընթացքին պաշտօնական տուեալներով 16 միլիոն քաղաքացիներ մէկտեղող ոստանի մէջ կրօնական փոքրամասնութիւններու միասնական թիւը հագիւ թէ հասնի 100 հազարի:

6-7 Սեպտեմբերի դէպքերը պետական դաւադրութիւն մըն էին եւ յաջողեցան իրենց նպատակին մէջ: «ԱԿՕՍ»

ԻԹԹԻՅԱՏԸ ԵՒ ՅՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 11-էն

Ահմէտ Ռիզա, Տոքթ. Նազըմ Ե Պէհմէտտին Շաքիր: Հնչակեաններկայացուցիչները խորհրդակցութեան որպէս առաջին օրակարգ կը դնեն՝ ինքնավար Հայաստան եւ Թուրքիա հարցը:

Այս հարցի մասին հնչակեանները կը պարզեն իրենց տեսակետը, որ էր՝ Հայաստանի քաղաքական ինքնավարութեան հարցը ընդունիլ որպէս նախապայման՝ միւս բոլոր հարցերու ուսումնասիրութեան համար:

Հնչակեան թէզին Տոքթ. Նազըմ կը հակադէտ իթթիհատի թեզը՝ ամբողջ Թուրքիոյ մէջ լայն բարենորոգումներ հաստատելու տեսակէտը, մերժելով ազգութեանց անջատ պահանջները եւ մերժելով անոնց ինքնավարութեան իրաւունքը:

Տեղի կ'ունենան հարցումներ, բացատրութիւններ, առանց սակայն դրական արդիւնքի: Պէհմէտտին Շաքիր կը հարցնէ թէ, ի՞նչ պիտի ըլլայ Թուրք, քիւրտ եւ այլ ազգերու իրաւական վիճակը հնչակեաններու կազմելիք անկախութեան մէջ: Անոր կը պատասխանեն թէ՛ ինքնավար Հայաստանի բոլոր քաղաքացիները պիտի վայելեն քաղաքացիական հաւասար իրաւունքներ՝ առանց ազգութեան եւ կրօնքի խտրութեան: Տոքթ. Նազըմ միշտ կը պնդէ թէ, Հայկական նահանգներուն մէջ «հայերը փոքրամասնութիւն կը կազմեն», ասոր որպէս պատասխան Հնչակեան ներկայացուցիչները կը յայտնեն թէ Թուրք կառավարութիւնը դիտաւորեալ կերպով նահանգներուն սահմանազօժերը այնպէս կազմած է, որ հայերը փոքրամասնութիւն ներկայացուին:

Այնուամենայնիւ իթթիհատի ներկայացուցիչներուն կը ներկայացուի մօտաւորապէս հետեւեալ կէտները:

- Քաղաքականապէս ինքնավար Հայաստանը ճանչնալ՝ Թուրք իշխատութեան ներքոյ, բայց եւրոպական պետութեանց երաշխաւորութեամբ.

- Ընդհանուր կառավարչապետ՝ նշանակուած եւրոպական պետութեանց կողմէ.

- Խորհրդարանական դրութիւն.

- Գործադիր իշխանութիւնը պիտի նշանակէր վարչապետը՝ բայց պիտի վաւերացուէր Խորհրդարանին կողմէ, որուն միայն պատասխանատու կը մնար ան, իր բոլոր գործառնութիւններուն համար.

- Հայերէնը պիտի դառնար պետութեան պաշտօնական լեզուն.

- Տարեկան որոշ տուրք պիտի վճարուէր Թուրք կառավարութեան՝ համապետական ընդհանուր ծախսերու համար.

- Ժողովրդական ոստիկանութիւն պիտի կազմակերպուէր՝ երկրի կարգապահութեան համար.

Իթթիհատի ներկայացուցիչներուն կողմէ հնչակեաններու այս նախագիծը սկզբունքով կ'ընդուն-

նի, սակայն՝ իրենց կուսակցութիւնը մեծամաստութեամբ կը մերժէ գայն, այն առարկութեամբ թէ՛ ան նախընթաց մը պիտի ըլլար բոլոր ոչ-թուրքերուն համար, որոնք նման ինքնավարութիւններ պիտի պահանջէին եւ քայքայուէր Օսմանեան կայսրութիւնը:

Անկարելի ըլլալով որոշ համաձայնութեան գալ, տեսակցութիւնները վերջ կը գտնեն: Հնչակեանները վերջնականապէս այն համոզումը կը գոյացնեն թէ Երիտասարդ Թուրքերը սուլթանականութեան հարազատ ժառանգորդներն են եւ հետեւաբար նոյն քան անվատահելի ու վտանգաւոր հայութեան համար: Այս համոզման հետեւանքով Հնչակեան կուսակցութիւնը կ'որոշէ անողոք պայքար մղել այդ կազմակերպութեան դէմ, ըլլայ Թուրքիոյ, ըլլայ արտասահմանի մէջ:

Այս պայքարը արդիւնաւորելու համար՝ Հնչակեան կուսակցութիւնը ամէն ջանք կը թափէ ներքին, ազգային ճակատի վրայ համերաշխութիւն եւ ուժերու համախմբում ստեղծել՝ միացեալ ուժերով դիմադրելու համար այս նոր եւ անլի վտանգաւոր թշնամիին: Այս ուղղութեամբ թափուած աշխատանքներու փայլուն փաստերը կը տեսանուին Մուրատի կողմէ եղած կոչերուն, դիմունքներուն մէջ, որոնք դժբախտաբար մնացին առանց կարեւոր հետեւանքներու:

Հնչակեան կուսակցութեան մերժուած՝ իթթիհատ կուսակցութիւնը, առանց յուսահատելու կը դիմէ Դաշնակցութեան եւ կը ստանայ անոր հաւանութիւնը: Դաշնակցութիւնը իր ներկայացուցիչները կը դրկէ իթթիհատի ձեռնարկած Օսմանեան կայսրութեան ընդդիմադիր տարրերու Գոնկրեսին, որ տեղի կ'ունենայ 1907 Դեկտեմբեր ամսուն, Փարիզի մէջ: Թուրք ընդդիմադիրներուն կողմէ կը մասնակցէր իթթիհատ եւ իշխան Սապահետինի՝ Թէրազը կուսակցութիւնը: Նիստերու մէկ մասին կը նախագահէր դաշնակցական Ակունին:

Յիշեալ քոնկրէսի ընթացքին առնուած որոշումներու շարքին էին.

1. Փրոփականտ զօրքի մէջ.
2. Տուրքերու մերժում.
3. Զինուած դիմադրութիւն՝ կառավարութեան դէմ.
4. Ընդհանուր ապստամբութիւն.
5. Գահընկէց ընել Սուլթան Համիդը.
6. Հաստատել խորհրդարան.
7. Կազմել գաղտնի խառն կոմիտէ մը, որ կապ պիտի պահէր ներքին գաւառներու մէջ գործող յեղափոխական կազմակերպութեանց հետ.

Իթթիհատի այս քաղաքական նուրբ սադրանքներուն զոհ գացին նաեւ յոյն եւ ալպանացի յեղափոխականները, որոնք անկեղծօրէն աշխատանքի լծուեցան Սուլթանի դէմ զօրաւոր պայքար մը բանալով:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՌԳԻ ԸԱՄԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԵՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Կը Մեկնարկեն Օհան Տուրեանի Ծննդեան 100-Ամեակի Յոբելեանական Միջոցառումները



Այս տարի կը լրանայ անուանի երաժիշտ եւ խմբավար Օհան Տուրեանի ծննդեան 100-ամեակը: «Արամ Խաչատրեան» համերգասրահին մէջ տեղի ունեցած է Օհան Տուրեանի 100-ամեակի միջոցառումներու մեկնարկին նուիրուած մամուլի ասուլիս, որուն բանաստեղծներն էին ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարի տեղակալ Արամ Խաչատրեանը, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նուագախումբի ղեկավար եւ գլխաւոր խմբավար Էտուարտ Թովիճեանը, ՀՀ վարչապետին որոշմամբ ստեղծուած՝ Օհան Տուրեանի ծննդեան 100-ամեակի չորեքնական յանձնաժողովի միւս անդամներէն հասարակական, մշակութային գործիչ վահան վարդապետեանը, Հայաստանի հանրային հեռուստա ընկերութեան գործադիր տնօրէն Յովհաննէս Մովսիսեանը, Հայաստանի հանրային ռատիօնկերութեան գործադիր տնօրէն Գարեգին Խուճարեանը եւ «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանը:

«Մայիսի 17-ը բացառիկ էր իր յիշողութեամբ, երաժշտութեան իր իմացութեամբ, քաղաքացիական խիզախութեամբ, անմիջականութեամբ, աշխարհի հանդէպ բաց լինելով: Ան քիչ արուեստագէտներէն էր, որ լիարժեքօրէն ընդգրկուած էր միջազգային երաժշտական կեանքին մէջ. աշխատած է 100-է աւելի նուագախումբերու հետ եւ արժանացած է ամենաբարձր գնահատանքի, - ըսած է ԿԳՄՄ նախարարի տեղակալ Արամ Խաչատրեանը եւ յաւելած, - շատ կը փափաքեմ, որ 100-ամեակը ըլլայ ոչ միայն Օհան Տուրեանի յիշատակին հանդէպ մեր յարգանքի դրսեւորումը, այլեւ ուղերձ, որ մենք աւելի ուշադիր ըլլանք մեր մեծանուն արուեստագէտներուն

հանդէպ, գնահատենք զանոնք ըստ արժանւոյն»:

Արամ Խաչատրեանը նաեւ երախտագիտութիւն յայտնած է վահան վարդապետեանին՝ որպէս յիշատակի հանդէպ խոնարհումի օրինակ: Ըստ նախարարի տեղակալին՝ վարդապետեանը եղած է Օհան Տուրեանի նեցուկը անոր կեանքի ամենաբեկումնային պահերուն:

Վահան վարդապետեանը ներկայացուցած է չորեքնական միջոցառումներու նախապատրաստական աշխատանքները, ընթացքը, ծրագիրը: Նախապատրաստուած է 4 տարի առաջ եւ գաղափարը խրախուսուած է կառավարութեան կողմէ:

8 Սեպտեմբերին՝ Օհան Տուրեանի ծննդեան օրը՝ ժամը 12:00-ին, Կոմիտասի անուան պանթէոնին մէջ յարգանքի տուրք պիտի մատուցուի մայիսի յիշատակին: Նոյն օրը՝ ժամը 19:00-ին, կը նախատեսուի աննախադէպ անակնկալով համերգ՝ «Արամ Խաչատրեան» համերգասրահին մէջ՝ Էտուարտ Թովիճեանի ղեկավարութեամբ:

13 Սեպտեմբերին՝ ժամը 19:00-ին, Կոմիտասի անուան թանգարան-հիմնարկին մէջ պիտի կայանայ շքեղ հանդիսութիւն. Կեդրոնական դրամատան կողմէ թողարկուած է Օհան Տուրեանի անուամբ արծաթէ յուշադրամ, որուն շնորհահանդէսը պիտի ըլլայ, միեւնոյն ժամանակ Բարձր արհեստագիտութեան արդիւնաբերութեան նախարարութեան եւ «Հայ Փոստ»-ի կողմէ պիտի թողարկուի Օհան Տուրեանի 100-ամեակին նուիրուած նամականիշ:

Վահան վարդապետեանը յայտնած է նաեւ, որ Ֆրանսայի մէջ Տեսալսողական միջազգային կազմակերպութիւնը կը թողարկէ «Հասարակական

Շար.ը էջ 14

Շողակաթ Եւ Արտանիշ Բնակավայրերուն Մէջ Իրականացուած Հնագիտական Պեղումները Կարելոր Տեղեկութիւններ Բացայայտած Են



Արդէն չորրորդ տարին է, որ ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկի արշաւախումբը Գերմանիոյ Հալէի Մարտին Լիւթերի համալսարանի հետ համատեղ պեղումներ իրականացուցած է Գեղարքունիքի մարզի Շողակաթ խոշորացուած համայնքի Շողակաթ եւ Արտանիշ բնակավայրերուն միջեւ ընկած ուշ պրոնզերկաթեղարեան (Քրիստոսէ առաջ երկրորդ հազարամեակի վերջ-առաջին հազարամեակի կէս) դամբարանադաշտին մէջ եւ վաղ պրոնզեղարեան (Քրիստոսէ առաջ երրորդ հազարամեակի առաջին կէս) բնակատեղիին մէջ:

«2019 թուականէն սկսեալ՝ դամբարանադաշտին մէջ արդէն պեղուած են թիւով 10 դամբարաններ: Այժմեան տուեալները կը փաստեն, որ այն գործած է Ք.Ա. 12-6-րդ դարերու ընթացքին: Սեւեռանայ լիճի անընդհատ տատանումներուն պատճառով դամբարանները ինչ-որ ժամանակ եղած են ջուրի տակ, որուն հետեւանքով օրկանական, ի մասնաւորի մարդաբանական նիւթը, բաւականին վատ պահպանուածութիւն ունի: Սակայն, չնայած անոր, այս տարի երկու դամբարաններուն մէջ հնարաւոր եղած է բանալ երկու անհատներու թաղումներ: Երկու դամբարաններուն մէջ ալ գտնուած են հանգուցեալին անդրաշխարհին մէջ ուղեկցող առարկաներ՝ պրոնզէ դաշոյն, նետասլաք, ապարանջաններ, օղեր, մատանիներ, տարբեր տեսակի ուղունքներ, կաւանօթներ», ներկայացուց ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկի տնօրէն Արսէն Բոբոխեանը:

2020 թուականէն արշաւախումբը կ'աշխատի նաեւ Կուրարաքսեան մշակոյթին վերաբերող եւ Ք.Ա. 28-26-րդ դարերով թուագրուող բնակավայրու մէջ, որ կը գտնուի նոյն Արտանիշի տարածքին մէջ եւ կը կրէ «Արտանիշ-9» պայմանական անունը: Այստեղ փաստագրուած են քարէ հիմքով կլոր յատակադիժով կացարաններ, անոնց կաւէ յատակները, իսկ կացարաններէն մէկուն կեդրոնին բացուած է օճախ: Այս տարուան պեղումները պարզած են, որ բնակատեղին ունի բնակեցման երկու փուլ, իսկ թէ անոնց միջեւ ժամանակային որքան տարբերութիւն կայ, կը մանրամասնուի հետագայ աշխատանքներու ընթացքին: «Դաշտային եւ տարալուծարանային հետազոտութիւնները ցոյց կու տան, որ այստեղ ապրող հասարակութիւնը զբա-

ղած է երկրագործութեամբ, մշակած է ցորեն, գարի, ապրած է անասնապահութեամբ՝ պահելով մանր եւ խոշոր եղջերաւոր անասուններ, խոզ, ձի: Անոնց կեանքի անբաժան մասը եղած է նաեւ որսորդութիւնը: Անոնք որսացած են այծեամ, եղջերու: Մարդիկ այդ ժամանակներուն զբաղուած են նաեւ մետաղագործութեամբ, ունեցած են ինքնատիպ ճարտարապետական, բրուտագործական աւանդոյթներ», յաւելեց մասնագէտը:



Այս տարուան պեղումները փաստած են նաեւ, որ բնակավայրի տարածքին մէջ, գայն լքուել է որոշ ժամանակ անց, կատարուած են թաղումներ: Պեղուած է մէկ դամբարան՝ հարուստ մետաղական եւ կաւէ առարկաներով:

Պեղումներուն զուգահեռ՝ արշաւախումբը կազմակերպած է նաեւ միջազգային ամառային դպրոց հնագիտապիրանտներուն համար, որուն ընթացքին ուսումնասիրուած եւ գործնականին մէջ փորձարկուած են հնագիտութեան հետ առնչուող այլ գիտակարգերու ընձեռած հնարաւորութիւնները:

«Այժմ ընթացքի մէջ են պեղումներէն ստացուած տուեալներու միջմասնագիտական հետազոտութիւնները, որոնք պիտի համալրեն Սեւեռանայ լիճի աւազանի հնագոյն մշակոյթներուն եւ հասարակութիւններուն վերաբերեալ մեր ունեցած գիտելիքները: Մասնաւորապէս, նորագոյն արդիւնքներ կ'արձանագրուին լիճի հիւսիսային եւ արեւելեան ափերու հնագիտութեան ոլորտին մէջ, որ մինչ օրս մասնագիտական հետազոտութեան չէ ենթարկուած: Այս պեղումները առաջին անգամ ապացուցեցին, որ

Շար.ը էջ 14

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

Յիշատակն Անմոռաց Մեր Սրտերում (Մանկավարժ Զնար Զախվերդեանի Մահուան տխուր առիթով)

Ռ. ԿՈՐԻԻՆ

Իրանահայ համայնքի հին սերնդի կրթա-դաստիարակչական ներկայացուցիչ մշակները յաջորդաբար կեանքից հեռանում են, երեկ (ոչ հեռու անցեալում) Միշա Հայրապետեան, Հրանդ Մարտիկեան, Նորայր Շահնազարեան, Նորայր էլյասյան, Աստղիկ Բաբայեան, Ալբերտ Մինասեան (Ալմին), Նազար Շահվերդեան, Ջանի Զարգարեան եւ շատ ուրիշներ եւ մեր ներկայ օրերին տիկ. Չնար Հախվերդեան-Մարտիկեանը:



Յառավ տեղեկացանք նրա մահուան մասին, որը տեղի է ունեցել Յուլիս 28-ին Աւստրիայի Վիեննա քաղաքում, իսկ հողին յանձնումը Օգոստոսի 26-ին, ուշացումի պատճառը Զարեհ տղայի Հայաստանից յուղարկաւորութեանը ներկայ գտնուելու համար չի յաջողել տեսագիր ստանալ պատկան դեսպանատնից: Նա իր սիրելի մօր յիշատակ-հոգեհանգիստը կատարել է Երեւանում:

Յառավ տեղեկացանք նրա մահուան մասին, որը տեղի է ունեցել Յուլիս 28-ին Աւստրիայի Վիեննա քաղաքում, իսկ հողին յանձնումը Օգոստոսի 26-ին, ուշացումի պատճառը Զարեհ տղայի Հայաստանից յուղարկաւորութեանը ներկայ գտնուելու համար չի յաջողել տեսագիր ստանալ պատկան դեսպանատնից: Նա իր սիրելի մօր յիշատակ-հոգեհանգիստը կատարել է Երեւանում:

Տիկ. Չնարը ծնունդ էր 1938 թ. Թեհրանում, ծնողների՝ Մինաս եւ Շիրին, վեց զավակների աւագն էր: Նա փոքր տարիքից սէր է տածել ուսման եւ ընթերցանութեան, տարրական եւ միջնակարգ ուսումն յաջողութեամբ աւարտելուց յետոյ նուիրուած է ուսուցչութեան դասաւանդելով «Գոհար» եւ հայոց Ազգ. «Արարատ» տարրական դպրոցներում:

Տիկ. Չնարը բացի այդ մանկավարժական ծառայութիւնից, գուգահեռաբար նաեւ սուրբ Թարգմանչաց եկեղեցուց եկեղեցական խորհրդի քարտուղարի պաշտօն է վարել 15 տարի երանաշնորհ Արտակ սրբազան առաջնորդի օրօք գնահատանքի արժանանալով, այդ ժամանակ եկեղեցուց խորհրդի ատենապետն էր՝ Շաւարշ Ղազարեանը:

Իրանի իսլամական յեղափոխութեան հաստատումով երկրում առաջացաւ տնտեսական եւ աշխատանքի դժուարութիւններ, որի հետեւանքով արտագաղթ տեղի ունեցաւ նաեւ մեր իրանահայ համայնքից: Տիկ. Չնարը նախքան իր արտագաղթը գաւակներին արդէն իսկ եկուսը՝ Վահէն եւ Արմէնը գտնուած էին Վիեննայում, իսկ Զարեհն Հայաստանում, նա 2006-ին միանում է երկու գաւակներին:

Նա 1959-ին ամուսնանում է համայնքում ծանօթ «Արարատ» դպրոցի տնօրէն-տեսուչ՝ Հրանդ Մարտիկեանի հետ բախտաւորութեամբ երեք արու գաւակներով՝ Վահէ, Զարեհ եւ Արմէն:

Հրանդ Մարտիկեանը 26 տարի շարունակ որպէս տնօրէն-տեսուչ կառավարում է դպրոցը: Նա իր ուսումն ստացել էր պարսկական յայտնի՝ «Դարելֆունտուն» միջնակարգ դպրոցում եւ տիրապետում էր պարսից գրականութեան: Նա մահականացուն կնքում է 1993 թ. 64 տարեկան հասակում: 2004-ին հայոց ազգ. «Արարատ» դպրոցի 48 ամեայ յոբելեանն է տօնակատարուած հրատարակուելով գրքով, ուր արժանուցնա յիշատակուած է հանգուցեալ տնօրէն-տեսուչը:

Հանգուցեալի յիշատակի աւիթով Գլենդէլի սուրբ Աստուածածին եկեղեցում կատարուեց հոգեհանգստեան արարողութիւն, հոծ թւով ցաւակիցներ էին ներկայացել, ապա նրանք մասնակցեցին յիշատակի հոգեճաշին, որը կազմակերպուել էր հանգուցեալի եղբայրների՝ Շահէնի, Կարոյի եւ Սարոյի կողմից: Հոգեճաշին ներկայ էր գտնուել Քամարա-Լիւբան հայրենակցական յանձնախումբը, որի կազմի կողմից յիշատակի եւ ցաւակցական խօսք ասաց՝ Շաւարշ Ղազարեանը: Վրէժ Սիմոնեան եւ Հայկ Ղուկասեանը նոյնպէս ցաւակցական խօսքեր ասացին:

Տիկ. Չնարն ուսման կարօտ ձգտում է մանկավարժութեան մէջ մասնագիտանալ, ուստի մասնակցելով պատկան հաստատութեան դասընթացներին արժանանում է վկայականի, որով կրթադաստիարակչական նախարարութեան կողմից արտօնուած է սեփական մանկապարտէզ ունենալու որոշումը: Նա 1965-ին հիմնադրում է՝ «Աթաբեկ» անունով մանկապարտէզ-նախակրթարանը Թեհրանի «Սասուն» քաղաքամասում Սրբոց Թարգմանչաց եկեղեցուն կից:

Սօր կորուստը մեծ է եւ անփոխարինելի գաւակների համար, որոնք երկար տարիներ առաջ կորցնելով իրենց հօր՝ Հրանդին, տիկ. Չնարը թէ՛ մայր էր եւ թէ՛ հայր, ծանրագոյն պարտականութիւն, բայց երբ սէր է լինում, համբերութիւն եւ նուիրում ամենինք քաղցրանում է, այժմ նրանք գրկուած են իրենց պահապան ու պաշտպան հրեշտակից, ծնողների ներկայութիւնը գաւակների կեանքում մեծ յոյս ու ապահն է, ինչ արած պէտք է համակերպուել եւ ապրել նրանց բարի յիշատակներով անմոռաց:

Նա 38 տարիներ կրթում եւ դաստիարակում է հազարաւոր նորամանուկներ նրանց սովորեցնելով եւ ոգեւորելով սրբ. Մեսրոպ Մաշտոցի այբուբենով, մեր չքնաղ, մեղրանուշ բարբառով եւ մեր եկեղեցու հաւատալիքներով, նաեւ ներշնչելով ազգային եւ հայրենասիրական ոգին մեր մանկագիր գրողների գողտրիկ արտասանութիւններով:

Սօր կորուստը մեծ է եւ անփոխարինելի գաւակների համար, որոնք երկար տարիներ առաջ կորցնելով իրենց հօր՝ Հրանդին, տիկ. Չնարը թէ՛ մայր էր եւ թէ՛ հայր, ծանրագոյն պարտականութիւն, բայց երբ սէր է լինում, համբերութիւն եւ նուիրում ամենինք քաղցրանում է, այժմ նրանք գրկուած են իրենց պահապան ու պաշտպան հրեշտակից, ծնողների ներկայութիւնը գաւակների կեանքում մեծ յոյս ու ապահն է, ինչ արած պէտք է համակերպուել եւ ապրել նրանց բարի յիշատակներով անմոռաց:

Հանգուցեալ Չնարը իր «Աթաբեկ» մանկապարտէզով բարոյական, կրթական եւ դաստիարակչական սրտցաւ ծառայութիւններ է մատուցել մեր «Սասուն» թաղա-

Հայ մօր, մանկավարժի, ազգային-հասարակական գործչի ծառայութիւնների նկատմամբ խորին յարգանքով մեր աղօթքն ենք ուղղում առ Աստուած, որ հանգուցեալի հոգուն իրադարձութիւն եւ հանգստութիւն լինի արժանանալով երկնային արքայութեան: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Օհան Տուրեանի Ծննդեան 100-Ամեակ

Շարունակուած էջ 13-էն

մաշխարհային երաժշտարուեստի գոհարներ» խորագրով 11 ձայներիգներէ կազմուած հաւաքածոյ, որուն մէջ ընդգրկուած են նաեւ Օհան Տուրեանի ստեղծագործութիւնները: Օհան Տուրեանը եղած է նաեւ Ֆրանսայի քաղաքացի ու Արուեստի եւ գրականութեան Ֆրանսական արուեստի շքանշանակիր:

Հանրային հեռուստարկերութիւնը մեծ եթերաժամով պիտի անդրադառնայ 100-ամեակին՝ երեք տարբեր ուղղութիւններով: Առաջին հերթին արխիւային բացառիկ տեսանիւթեր պիտի հրատարակուին, երկրորդ՝ Սթաս Նամինի 2006-ի Օհան Տուրեանին նուիրուած ֆիլմը կը մշակուի եւ կը թարգմանուի հայերենի: Այն եթեր դուրս պիտի գայ Նոյեմբերի վերջը: Եւ երրորդ՝ 100-ամեակին նուիրուած բոլոր միջոցառումները աշխուժօրէն պիտի հեռարձակուին:

Գետիկ Պաղտասարեանը կը կերտէ Տուրեանի արձանը, որ պէտք է տեղադրուի Օփերայի եւ պալատի ազգային ակադեմիական թատրոնի եւ Ազատութեան հրապարակի շարակից տարածքին մէջ:

Հայաստանի հանրային ռատիօընկերութիւնը եւս Օհան Տուրեանին վերաբերող հարուստ նիւթ ունի: Անոր ձայնագրութիւններուն մեծամասնութիւնը կը գտնուի Հանրային ռատիօընկերութեան մէջ: Անոնք թուայնացուած են եւ արդէն հասանելի են լայն հանրութեան: Շուտով պիտի թողարկուի Օ. Տուրեանի ստեղծագործութիւններու ամբողջական ժողովածոն: Օհան Տուրեան արուեստագէտին բարձր գնահատած է նաեւ յոբելեանական յանձնաժողովի անդամ, «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանը՝ որպէս բացառիկ ազնիւ մարդ եւ քաղաքացի:

Հայաստանի ազգային ֆիլմահարմոնիկ նուագախումբի գեղարուեստական ղեկավար էտուարտ Թոփճեան կիսուած է մայնթրոյին մասին իր յիշողութիւններով:

Նշենք, որ յոբելեանական միջոցառումներուն մեկնարկը պիտի տրուի Հայաստանի ազգային ֆիլմահարմոնիկ նուագախումբի Երեւանեան 14-րդ միջազգային երաժշտական փառատօնով, որ ամբողջութեամբ նուիրուած է Օհան Տուրեանի յոբելեանին:

Շողակաթ Եւ Արտանիշ Բնակավայրերուն Սէջ

Շարունակուած էջ 13-էն

Սեւանայ լիճի հիւսիսային եւ արեւելեան ափերուն մարդոց աշխուժ գործունէութիւնը կը փաստուի Ք.Ա. 3-րդ հազարամեակէն, որ անմիջականօրէն կը շարակապուի Կեդրոնական Հայաստանի հետ: Ըսած է, թէ մեր գտածոները Արարատ եան

դաշտին մէջ, Հայաստանի միւս տարածքներուն մէջ յայտնաբերուած մշակութային արժէքներու մէկ անբաժան ու նոյնատիպ մասը կը կազմեն», յաւելեց Արսէն Բոբոխեանը:

Հնագիտական պեղումները արշաւախումբին կողմէ պիտի շարունակուին նաեւ 2023 թուականին:



DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- o JUVENILE DEFENSE
- o DOMESTIC VIOLENCE
- o ASSAULT & BATTERY CHARGES
- o DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- o VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- o IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- o ROBBERY AND THEFT OFFENSES
- o ASSAULT WITH A DEADLY WEAPON
- o CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- o CRIMINAL THREATS
- o WEAPON CHARGES
- o DRUG OFFENSES
- o SEX CRIMES
- o THEFT CRIMES
- o GANG CRIMES



ALICE TAVOUKJIAN
Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.



LAW OFFICES OF ALICE TAVOUKJIAN, PC

www.TAVOUKJIANLAW.com
135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801

CALL FOR A FREE CONSULTATION
626.386.8606

Արթուր Ալեքսանեան Աշխարհի Ախոյեան. Մալխաս Ամոյեան՝ Պրոնգէ Մետալակիր



Հայաստանի յունահռոմէական ոճի ըմբշամարտի հաւաքականի անդամ, Ողիմպիական խաղերու ախոյեան Արթուր Ալեքսանեանը աշխարհի առաջնութեան քառակի ախոյեան է:

Մերպիայի մայրաքաղաք Պելլրատի մէջ ընթացող յունահռոմէական ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնութեան 97 քի ծանրութեան եզրափակիչին Արթուր Ալեքսանեան մրցեցաւ պուլկարացի Կիրիլ Միլենով Միլովի հետ: Հայ ըմբշը յաղթանակ տօնեց 5:1 արդիւնքով:

1/8 եզրափակիչին Արթուր Ալեքսանեան յաղթած էր աշխարհի կրկնակի ախոյեան, թուրք Մետեհան Պաշարին եւ դուրս եկած քառորդ եզրափակիչ, ուր ուժերը չափելով Ղրղզստանէն Բեկսուլթան Մախմուդովի հետ՝ յաղթած էր 9:0 արդիւնքով: Կիսաեզրափակիչին Ողիմպիական խաղերու ախոյեանը կը մրցէր աշխարհի ներկայիս ախոյեան Մոհամադխադի Աբդուլահ Սարալիի հետ: Հայ ըմբշը յաղթած էր 3:1 արդիւնքով:

77 քի ծանրութեան մէջ Մալխաս Ամոյեան նուաճեց պրոնգէ մետալ: Պրոնգէ մետալի համար զօտեմարտին Ամոյեան մրցեցաւ աշխարհի ախոյեան, Եւրոպայի կրկնակի փոխախոյեան, Եւրոպական խաղերու փոխախոյեան, սերպ Վիկտոր Նեմեշի հետ եւ տպաւորիչ յաղթանակ արձանագրեց 7:1 արդիւնքով:

«Ինթեր» Յաղթեց, Մխիթարեանը Դուրս Եկաւ Փոխարինման

Իտալիոյ առաջնութեան 6-րդ հանգրուանին փոխախոյեան «Ինթերը» ընդունեց «Թորինոյին»: Իտալացի Սիմոնէ Ինձագիի գլխաւորած խումբը յաղթեց նուազագոյն արդիւնքով:

89-րդ վարկեանին աչքի ինկաւ խորուաթ կիսապաշտպան Մարսելօ Պրոզոլիչը:

Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ինթերի» պահեստայիններու մէջ էր եւ 76-րդ վարկեանին փոխարինեց թուրք կիսապաշտպան Հական Չալճանօղլուին:

«Ինթեր» 12 կէտով բարձրացաւ երրորդ տեղը, Ախոյեան «Միլանը» մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Սամպատորիայի» հետ եւ առաւելութեան հասաւ 2:1 արդիւնքով:

«Միլան» 14 կէտով հաւասարեցաւ առաջատար «Նափոլիին» եւ երկրորդն է:

Մատրիտի «Ռեալը» եւ «Պարսելոնան» Յաղթական

Սպանիոյ առաջնութեան 5-րդ հանգրուանին ախոյեան «Ռեալը» Մատրիտի մէջ ընդունեց «Մալորկային»: Իտալացի Կառլօ Անչելոտիի գլխաւորած խումբը յաղթանակ արձանագրեց 4:1 արդիւնքով:

«Պարսելոնան» հիւրընկալեց «Կադիսին» եւ յաղթեց 4:0 արդիւնքով: «Ռեալ» 5 յաղթանակէն յետոյ 15 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Պարսելոնայէն»:

Նեյմարի Կոլը Յաղթանակ Բերաւ ՊՍԺ-ին

Ֆրանսայի առաջնութեան 7-րդ հանգրուանին ՊՍԺ-ն սեփական խաղադաշտին վրայ մրցեցաւ «Պրեստի» հետ եւ յաղթեց նուազագոյն հաշուով:

Ֆրանսացի Քրիստոֆ Գալտիէի գլխաւորած խումբին յաղթանակ ապահովեց պրագիլցի յարձակող Նեյմարի կոլը 30-րդ վարկեանին: Կոլային փոխանցումը կատարեց արժենթինացի յարձակող Լիոնել Մեսիին:

ՊՍԺ-ն 19 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտով առաջ է երկրորդ տեղը գտնուող «Լանսին»:

Անգլիական Փրեմիեր Լիգայի 7-րդ Հանգրուանը Յետաձգուեցաւ Թագուհիի Մահուան Պատճառաւ

Մեծ Բրիտանիոյ թագուհի Եղիսաբէթ Երկրորդի մահուան պատճառաւ անգլիական Փրեմիեր Լիգայի ղեկավարութիւնն ու ակումբները որոշած են 7-րդ հանգրուանի հանդիպումները յետաձգել:

US Open. Ալկարաս Յաղթեց Ռուուդին եւ Նուաճեց Տիտղոսը

19-ամեայ սպանացի Գառլոս Ալկարասի յաղթանակով աւարտեցաւ թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնութիւնը: Տղոց մենախաղի եզրափակիչին աշխարհի չորրորդ ռակետը մրցեցաւ 7-րդ ռակետ, նորվեկիացի Քասպեր Ռուուդի հետ եւ առաւելութեան հասաւ 6:2, 2:6, 7:6 (7:1), 6:3 արդիւնքով: Մրցախաղը տեւեց 3 ժամ եւ 23 վայրկեան:



Ալկարաս առաջին անգամ յաղթեց «Մեծ սաղաւարտի» մրցաշարին եւ կը ստանայ 2,6 միլիոն տոլար մրցանակային գումար եւ 2000 վարկանիշային կէտ: Ան կը գլխաւորէ համաշխարհային դասակարգման աղիւսակը՝ դառնալով ամենաերիտասարդ առաջին ռակետը պատմութեան մէջ:

Աշխարհի Առաջին Ռակետ Իկա Շվիոնտեկը Նուաճեց Կանանց Տիտղոսը

Լեհ իկա Շվիոնտեկը նուաճեց ԱՄՆ-ի բաց առաջնութեան ախոյեանի տիտղոսը կանանց մենախաղին:



Եզրափակիչին աշխարհի առաջին ռակետը մրցեցաւ աշխարհի 5-րդ ռակետ, թուրքացի Օնա Ժապերի հետ եւ յաղթեց երկու սեթով 6:2, 7:6 (7:5): Պայքարը տեւեց 1 ժամ եւ 45 վայրկեան:

Շվիոնտեկ առաջին անգամ նուաճեց ԱՄՆ-ի բաց առաջնութեան տիտղոսը եւ կը ստանայ 2,6 միլիոն տոլար մրցանակային գումար եւ 2000 վարկանիշային կէտ:

Շվիոնտեկը Լեհաստանի առաջին ներկայացուցիչն է, որ կը յաջողի նուաճել այս տիտղոսը:

Սպերցեանի Փոխադրման Արժէքը Բարձրացած Է 3 Միլիոն Եւրոյով. Ան Ամենաթանկարժէք Հայ Ֆուտպոլիստն Է Ներկայիս

Transfermarkt կայքը 3 միլիոն եւրոյով աւելացուցած է Հայաստանի ֆութպոլի ազգային հաւաքականի եւ ռուսական «Կրասնոտար» ակումբի կիսապաշտպան Էդուարդ Սպերցեանի փոխադրման արժէքը:



«Արմենփրես»-ի փոխանցումով՝ ֆութպոլիստի փոխադրման արժէքը այս պահուն 9 միլիոն եւրօ է. կայքի նախորդ թարմացման ժամանակ անոր փոխադրման արժէքը 6 միլիոն եւրօ էր:

Սպերցեան դարձած է նաեւ ամենաթանկարժէք հայ ֆուտպոլիստը: Անոր փոխադրման արժէքը 1 միլիոն եւրոյով կը գերազանցէ «Ինթեր»-ի կիսապաշտպան, Հայաստանի հաւաքականի նախկին աւագ Հենրիխ Մխիթարեանի եւ ամերիկեան «Քոլամպուս»-ի յարձակող Լուկաս Սելարեանի փոխադրման արժէքներուն:

Իտալիան Վոլիպոլի Աշխարհի Ախոյեան

Լեհաստանի կատոլիցէ քաղաքին մէջ կատարուած վոլիպոլի տղոց աշխարհի առաջնութեան եզրափակիչին Իտալիոյ հաւաքականը մրցեցաւ Լեհաստանի խումբին հետ եւ առաւելութեան հասաւ 3:1 (22:25, 25:21, 25:18, 25:20) արդիւնքով՝ նուաճելով աշխարհի ախոյեանի տիտղոսը: Իտալացիները նախորդ անգամ 24 տարի առաջ էին նուաճած այս տիտղոսը:



Պրոնգէ մետալներու համար պայքարեցան Պրագիլի եւ Սլովենիայի հաւաքականները: 3:1 (25:18, 25:18, 22:25, 25:18) արդիւնքով յաղթեցին պրագիլացիները:



ARMENIAN INDEPENDENCE DAY Festival

FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱՉԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

ՓԱՌԱՍՏՈՒ

SUNDAY, SEPTEMBER 18, 2022

STARTING AT 11:00AM

VERDUGO PARK, GLENDALE

1621 CANADA BLVD, GLENDALE, CA 91208

ORGANIZED BY
NOR SERENITY CULTURAL ASSOCIATION

CANCELLED

LIVE MUSIC

ARMENIAN FOOD

EVENT HOST
LILIT SARGSYAN

KIDS GAMES

ART EXHIBITION

General Sponsors

SAHARA
MIDDLE EASTERN CUISINE
Serving Pasadena since 1992
2226 E. Colorado Blvd.
Pasadena, CA 91107
626.795.6900
www.saharapasadena.com

INNOVATIVE
Designs Manufacturing, Inc.

SPONSORS



Kathryn BARGER
5th District Supervisor • County of Los Angeles



HARTOUNIAN
A PROFESSIONAL LAW CORPORATION



Glendale West Pharmacy
and
Medical Supply



ՄԱՍԻՍ
www.massispost.com

Նկատի առնելով Հայաստանի սահմաններուն վրայ տիրող պատերազմական իրավիճակը եւ յարգելով մեր զոհերու յիշատակը, Անկախութեան փառատօնը ջնջուած է